

2 (292)

31.01.2012թ.

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապարտությունն եւ գիրարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Լусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԿԱՏԱՐՎԱԾԸ ԲԱՎԱՐԱՐ Է, ԱՆՏՐԱԺԵՑ Է ԱՐԱԳԱՑՈՒՄ ՀԱՂՈՐԴԵԼ

Իր գործունեության հինգերորդ տասնամյակը թևակոխած Արցախի պետական համալսարանի համար պատմություն դարձավ ևս մեկ հաշվետու տարի: Բուհի խորհուրդը՝ նախագահ, ԼՂՂ վարչապետ Արա Յարությունյանի գլխավորությամբ լսեց 2010-2011 ուստարվա ԱրՊՀ գործունեության մասին ռեկտոր Ստեփան Դադայանի հաշվետվությունը:

41%, ինչը վատ ցուցանիշ է: Սակայն հեռակա ուսուցման համակարգի ուսանողների ուսման որակը դեռևս մնում է ցածր. 1292 ուսանողներից «գերազանց» գնահատականներով սովորում է ընդամենը 29-ը (2-3%), իսկ «լավ» և «գերազանց» գնահատականներով՝ ընդամենը 79 (6,4%) ուսանող, ասել է թե՛ այս համակարգում բարձր առաջադիմությունը

Գիշտ է, համալսարանն այսօր ունի տեխնիկական հնարավորություններ՝ օնլայն ռեժիմով կազմակերպելու հեռավար ուսուցում, սակայն ճանաչված գիտնականի կենդանի խոսքը լսելը, նրա սեմինարներին մասնակցելը անփոխարինելի է: Ռեկտորը ցավով արձանագրեց, որ համալսարանում դեռևս առկա են արատավոր, կոռուպցիոն երևույթներ: Հաշվետու տարում նման արարքի համար երեք դասախոս հեռացվել է աշխատանքից: Ռեկտորը հավաստիացրեց, որ համալսարանի ղեկավարությունը հաստատականորեն է տրամադրված շարունակելու անհաշտ պայքարը նման երևույթների դեմ:

Համալսարանի դասախոսական կազմի կողմից որոշակի գիտամեթոդական աշխատանք է կատարվել: Ընդհանուր առմամբ, հրատարակվել է 285 աշխատություն, այդ թվում՝ դասագրքեր, մենագրություններ, գիտամեթոդական ձեռնարկներ:

Համալսարանի գիտական գործունեության կարևոր մաս են կազմում գիտաժողովները: Հաշվետու շրջանում անց են կացվել ԼՂՂ հռչակման 20-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ. մայիսին՝ միջազգային գիտաժողով կիրառական մաթեմատիկայի գծով, մեխանիկայի հիմնահարցերին նվիրված, ինչպես նաև ուսանողական միջբուհական գիտաժողովներ:

Համալսարանի ուսումնամեթոդական, գիտական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու հարցում իր ուրույն տեղն ունի գիտական գրադարանը, որի գրքային ֆոնդն այսօր կազմում է շուրջ 88629 միավոր:

2011թ. էլեկտրոնային գրադարան մուտքագրված գրքերի թիվն ավելացել է 10767-ով և այսօր կազմում է շուրջ 33267 միավոր գիրք և հոդված:

Համալսարանի գիտաուսումնական գործընթացի ապահովման համար մեծ է նյութատեխնիկական բազայի զարգացման դերը, որն իրականացվել է ըստ համապատասխան ծրագրի: Այսպես, տնտեսաիրավաբանական ֆակուլտետի համար բացվել է ֆինանսահաշվարկի մասնագիտական կաբինետ: Մանկավարժության ֆակուլտետի ՆՊՊ ամբիոնի համար՝ երկու մասնագիտական կաբինետներ, հոգեբանության մասնագիտական կաբինետ: Օտար լեզուների ֆակուլտետի համար՝ Ռուսական մշակույթի բարեկամների կենտրոն, անգլերեն լեզվի կենտրոն: Պատմության և քաղաքագիտության ֆակուլտետի համար՝ համաշխարհային պատմության կաբինետ: Քիմիկենսաբանական ֆակուլտետի ստոմատոլոգիայի կենտրոնը համալրվել է նոր տեխնիկայով, և ստեղծվել է նոր կաբինետ, ֆիզմաթ ֆակուլտետի համար՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման կաբինետ: Ճարտարագիտական ֆակուլտետի համար՝ համակարգչային կենտրոն:

Տեղադրվել են 35 համակարգիչներ, 10 պրոեկտորներ, 8 պատճենահանման սարքեր, տպագրական և հրատարակչական նոր տեխնիկա:

«ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՋՈՒԿԻ» ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Անցած տարվա նոյեմբերի 11-ին Ստեփանակերտի դպրոցներում անցկացվեց «Ռուսական արջուկ» լեզվագիտություն բոլորի համար՝ մրցույթ-խաղը:

2000թ. Ռուսաստանում սկզբնավորված և այսօր 15 երկրներում անցկացվող «Կենգուրու» մաթեմատիկական հանրահայտ խաղին կրտսեր եղբայր համարվող այս մրցույթին Հայաստանը միացել է 2010-ին, Արցախը՝ 2011-ին:

Մրցույթի արդյունքների արցախյան ամփոփումը տեղի ունեցավ հունվարի 27-ին, կրթության և գիտության նախարարությունում, խաղի կազմակերպիչ՝ «Այբ» կրթական հիմնադրամի ղեկավարի մասնակցությամբ:

Բացելով հանդիպումը՝ ԼՂՂ կրթության և գիտության փոխնախարար Սլավա Ասրյանը շնորհավորեց դպրոցների տնօրեններին, ուսուցիչներին ու աշակերտներին՝ մրցույթում լավագույն արդյունքներ ցուցաբերելու կապակցությամբ:

Երկրորդը՝ մրցույթը վճարովի է՝ 970 դրամ՝ Հայաստանում և Ղարաբաղում: «Այբ» ղեկավարի պարզաբանմամբ, վճարովի է այն պատճառով, որպեսզի անկախ լինի արտաքին գործոններից՝ տնտեսական, քաղաքական: Այդ գումարները չեն ծածկում ամբողջ ծախսերը և գնում են մրցութային ֆոնդը ձևավորելու վրա: Այդ իսկ պատճառով կազմակերպիչներն ստիպված են լինում նաև հովանավորներ ընդգրկել:

Մրցույթին մասնակցությունն ըստ ցանկության է, ոչ մի նախապայման, նախնական ընտրություն չկա: Քանի դեռ սովորում է դպրոցում, երեխան կարող է մասնակցել՝ անկախ նրանից, մրցանակակիր եղել է, թե ոչ: Մրցույթն անցկացվում է տարին մեկ անգամ՝ նոյեմբերի երկրորդ հինգշաբթի կամ ուրբաթ օրը:

Առաջին տարում մրցույթին Արցախում մասնակցել են միայն Ստեփանակերտի դպրոցականները: Կազմակերպիչ խոսքով, նպատակ ունեն ընդլայնել աշխարհագրությունը՝ ներգրավել մյուս քաղաքների և գյուղերի դպրոցները, ինչպես նաև՝ մրցույթների տեսակները: Արդեն մի անգամ անցկացրել են «Պատանի քիմիկոսների» համահայկական մրցաշար: Ստադիոն են ավելացնել առարկաները և անպայման Արցախի աշակերտներին հրավիրել մասնակցել:

Շ. Կարապետյանը Ստեփանակերտի բոլոր 13 մասնակից դպրոցների երեխաների հաշվով բերել էր հավաստագրեր, որոնք կբաժանվեն նրանց: Իսկ ներկայացած մրցանակակիրներին անձամբ, հանդիսավորությամբ հանձնեց պարգևները:

Կրկին շնորհավորելով մասնակիցներին՝ փոխնախարար Ս. Ասրյանը հույս հայտնեց, որ տարեցտարի արդյունքները կբարձրանան:



խաների համար կարող է մի քիչ բարդ լինել: Այնուամենայնիվ, այդ բոլոր գործոնները հաշվի առնելով, Հայաստանի (այդ թվում՝ Արցախի) մասնակիցների արդյունքները գոհացուցիչ են, տեղեկացրեց Շ. Կարապետյանը: Միջին ցուցանիշը բավական բարձր է: Մասնակակիր է 487 երեխա, որից 50-ը՝ դիպլոմակիր: Նրանցից 15 մրցանակակիր և 1 դիպլոմակիր Արցախից են:

«Ռուսական արջուկ» սկզբունքները փոխառված են «Կենգուրուից». բոլոր մասնակիցները մրցույթն սկսելուց առաջ ստանում են հուշանվերներ, փոքր հուշ մրցույթից՝ գրիչ, էջանշան, օրացույց: Մյուս սկզբունքը բոլոր մասնակիցներին հավաստագիր տալն է՝ անկախ վաստակած միավորներից: Երրորդը՝ մրցույթը վճարովի է՝ 970 դրամ՝ Հայաստանում և Ղարաբաղում: «Այբ» ղեկավարի պարզաբանմամբ, վճարովի է այն պատճառով, որպեսզի անկախ լինի արտաքին գործոններից՝ տնտեսական, քաղաքական: Այդ գումարները չեն ծածկում ամբողջ ծախսերը և գնում են մրցութային ֆոնդը ձևավորելու վրա: Այդ իսկ պատճառով կազմակերպիչներն ստիպված են լինում նաև հովանավորներ ընդգրկել:

Մրցույթին մասնակցությունն ըստ ցանկության է, ոչ մի նախապայման, նախնական ընտրություն չկա: Քանի դեռ սովորում է դպրոցում, երեխան կարող է մասնակցել՝ անկախ նրանից, մրցանակակիր եղել է, թե ոչ: Մրցույթն անցկացվում է տարին մեկ անգամ՝ նոյեմբերի երկրորդ հինգշաբթի կամ ուրբաթ օրը:

Առաջին տարում մրցույթին Արցախում մասնակցել են միայն Ստեփանակերտի դպրոցականները: Կազմակերպիչ խոսքով, նպատակ ունեն ընդլայնել աշխարհագրությունը՝ ներգրավել մյուս քաղաքների և գյուղերի դպրոցները, ինչպես նաև՝ մրցույթների տեսակները: Արդեն մի անգամ անցկացրել են «Պատանի քիմիկոսների» համահայկական մրցաշար: Ստադիոն են ավելացնել առարկաները և անպայման Արցախի աշակերտներին հրավիրել մասնակցել:

Շ. Կարապետյանը Ստեփանակերտի բոլոր 13 մասնակից դպրոցների երեխաների հաշվով բերել էր հավաստագրեր, որոնք կբաժանվեն նրանց: Իսկ ներկայացած մրցանակակիրներին անձամբ, հանդիսավորությամբ հանձնեց պարգևները:

Կրկին շնորհավորելով մասնակիցներին՝ փոխնախարար Ս. Ասրյանը հույս հայտնեց, որ տարեցտարի արդյունքները կբարձրանան:



Ուսումնական տարին բուհն սկսել է, այսպես ասած, էքստրենալ պայմաններում: Ուսուցման 12-ամյա համակարգին անցնելու հետ կապված՝ հանրակրթական դպրոցները շրջանավարտներ չբողարկելու պատճառով ընդունելություն չի եղել (մասամբ՝ հեռակա համակարգում): Սակայն դրանից ուսումնական գործընթացը չի տուժել: Այսօր համալսարանում շուրջ 30 մասնագիտությամբ ուսանում է 3025 ուսանող, որից 1733-ը՝ առկա, 1292-ը՝ հեռակա ուսուցմամբ: Առկա ուսուցման ուսանողներից 657-ը ընդգրկված են պետպատվերի շրջանակներում: Սագիտորական ծրագրով ուսանում է 575 մագիստրանտ, որից պետպատվերով՝ 215: Համալսարանում հիմնական հիմունքներով աշխատում է 201 դասախոս, ժամավարձային հիմունքներով՝ 130:

Համալսարանի հինգ մասնաշենքերը, որտեղ տեղակայված են բոլոր կառույցները, այդ թվում՝ 2 մարզադահլիճ, հանրակացարան, գրադարան, ընթերցասրահներ, միստերի դահլիճներ, ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած մասնագիտական կաբինետներ, կենտրոններ, տնտեսական օժանդակ կառույցներ, հրատարակչություն, ծառայում են մեկ գլխավոր նպատակի՝ ժամանակի պահանջներին համահունչ գիտելիքներով և ունակություններով օժտված երիտասարդ մասնագետների պատրաստմանը:

Այսօր համալսարանում ուսումնառությունն ընթանում է կրթության միջազգային չափանիշներին համապատասխանող կրեդիտային համակարգով (հեռակա ուսուցման մեջ կիրառվում է անցած ուսումնական տարվանից, իսկ առկա բաժնում արդեն չորս տարի է), աշխատանքներ են տարվում ասպիրանտուրայում և այն մտցնելու ուղղությամբ: Ռեկտորի կարծիքով, կրեդիտային համակարգին անցնելը հիմք է տալիս պետական քննություններից հրաժարվելու:

«Լավ» և «գերազանց» առաջադիմություն ունեցող ուսանողների թիվն առկա բաժնում կազմում է մոտ

շուրջ 9% է: Բուհի ղեկավարը չըջանցեց նաև հետ մնացողներին. ընդհանուր առմամբ, երկու կիսամյակների արդյունքում հեռացվել է 170 ուսանող, որից 77-ը՝ առկա բաժնից, 93-ը՝ հեռակա: Բանախոսի կարծիքով, ուսումնական բնագավառում բուհի գլխավոր խնդիրը մնում է ուսման որակի բարձրացումը: Մրցակցությունը դա է պարտադրում:

Համալսարանում լուրջ ուշադրություն է դարձվում նաև փորձուսուցմանը:

Ձգալի աշխատանք է կատարված ուսանողների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Վկարտվել է ուսանողական հանրակացարանի 22 սենյակների վերանորոգումը, որը համապատասխանում է ուսանողական կենցաղի համար անհրաժեշտ բոլոր պահանջներին: Այժմ հանրակացարանում բնակվում է 110 ուսանող:

Բուհի ուսումնական գործընթացում ընդգրկված է 331 դասախոս, այդ թվում՝ 19 գիտության դոկտոր-պրոֆեսորներ, 92 գիտության թեկնածու-դոցենտներ:

Մտահոգիչ է մնում դասախոսների տարիքային ցուցանիշը: Հաշվետու տարում 11 դասախոսներ անցել են թոշակի: 7 ասպիրանտ և հայցորդ (միջին տարիքը՝ 37 տարեկան) պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, մեկ դասախոս՝ դոկտորական: Բայց դա բավարար չէ: Այսօր բուհում առկա է մաթեմատիկայի, իրավագիտության, տնտեսագիտության, ստոմատոլոգիայի, փիլիսոփայության, քաղաքագիտության, քաղաքաշինության, աշխարհագրության, էլեկտրաէներգետիկայի մասնագիտությունների գծով որակյալ դասախոսների մեծ պահանջարկ: Սա, իհարկե, չի նշանակում, թե ուսումնական գործընթացը համալսարանում կաղում է: Ընդհանրապես, չկա համալսարան, որը կտարային պահանջ չունենա: Ցանկացած բուհ անընդհատ դասախոսներ է հրավիրում այլ բուհերից, հակառակ դեպքում տեղի կունենա լճացում:

Սեփ. Լյարվություն

ԲԵՋ ՀԱՍԱՐ, ԴԻՍՈՐԴ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ

Դիմորդների ուշադրությունն ենք վերստին հրավիրում այն բանին, որ «Լուսարարի» անցած տարվա վերջին համարում գետնովել է ԼԳՅ բուհերի և միջին մասնագիտական ու արհեստագործական ուսումնարանների 2012-2013 ուսումնական տարվա մասնագիտությունների և քննությունների ցանկը:

ԼԳՅ կրթության և գիտության փոխնախարար Ալավա Ասրյանի նախաձեռնությամբ հանրապետությունում գործող բուհերի, ինչպես նաև միջին մասնագիտական և արհեստագործական միջադր ուսումնարանների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ պարզաբանվեցին նոր ուսումնական տարվանից նշված ուսումնական հաստատություններում սպասվող նորությունները: Փոխնախարարի տեղեկատվությամբ՝ ուսումնական պլանի համաձայն այս տարվա 12-րդ դասարաններում՝ ընդհանուր տիպի և ավագ դպրոցներում 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն ուղղված են քննությունների նախապատրաստմանը: Այսինքն՝ բոլոր շրջանավարտների համար պայմաններ են ստեղծված, որպեսզի իրենց նախասիրություններին համապատասխան ընտրեն այն առարկաները, որոնցից պետք է միասնական կամ պետական ավարտական քննություն հանձնեն:

Դիմորդները պետական և ոչ պետական հաստատություններում կարող են ընտրություն և կատարել 64 մասնագիտությունների գծով՝ ըստ նախասիրությունների ու մեր տնտեսության պահանջների: Այս տարվա մասնագիտությունների ցանկում կան և նորերը: Որոշ փոփոխություններ կան նաև քննությունների ցանկում: Ծանոթությունների բաժնում տրված է, որ մեկ աստղանիշով նշված բոլոր առարկաների ոչ միջուկային քննությունները փոխանցվում են միջնակարգ կրթության ատեստատից կամ կրթության համապատասխան փաստաթղթից: Դա նախորդ տարի ևս գործում էր: Մրցութային քննությունների մի մասը նշված է երկու աստղանիշով, իսկ ևս նշանակում է, որ դիմորդներն այդ առարկաների մրցութային քննությունները կարող են հայտագրել նախապես իրենց ատեստատից, եթե, իհարկե, նրանք հանձնել են այդ առարկայի ավարտական քննությունը, իսկ եթե հանձնել են միասնական քննություն, ապա հայտագրում են միասնական քննության զնահատականը: Տարբերությունն այստեղ այն է, որ ովքեր ուզում են ընդունվել անվճար համակարգ, պարտադիր կարգով պետք է տվյալ առարկայից միասնական քննություն հանձնեն լինեն, իսկ հակառակ պարագայում կընդունվեն միայն վճարովի թափուր տեղերում: Նախորդ տարվա համեմատությամբ երկու աստղանիշով նշված առարկաները շատ են, և այսպիսով, լայն հանրավորություն է տրվում, որ հիմնական մեկ առարկայի միասնական քննության հիման վրա դիմորդը կարողանա ընդունվել վճարովի համակարգ:

Հաջորդ նորությունը վերաբերում է օտար լեզու առարկային: Նրա մեջ մտնում են ռուսաց, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուները (հանրապետության դպրոցներում այս օտար լեզուներն են սովորեցնում): Որ մասնագիտության համար սահմանված է օտար լեզվից քննություն, դիմորդը կարող է այս չորս առարկաներից ընտրել մեկնունեկը: Այսպես, եթե տնտեսագիտական բուհի, իրավագիտական, հասարակական մասնագիտությունների գծով պարտադիր էր, որ օտար լեզու՝ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն հանձնեին, ապա այս տարի ընտրությունը տրվում է դիմորդին. նա կարող է ընտրել ինչպես այս լեզուներից որևէ մեկը, այնպես էլ՝ ռուսաց լեզուն: Օտար լեզվի փոխարեն ռուսաց լեզու հանձնելը ձեռնադր է հատկապես այն գյուղական բնակավայրերի դպրոցների շրջանավարտներին, որոնք այդ առարկան չեն անցել, և դա խոչընդոտ չի կարող դառնալ մասնագիտության ընտրության հարցում:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում առանձնակի փոփոխություններ չեն կատարվել, միայն բժշկական քոլեջում է նոր մասնագիտություն ավելացել՝ դեղագործություն և Շուշիի հունամիտար քոլեջում՝ դերասանական արվեստ բաժինը:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ինչպես նախորդ տարի, այս տարի և ընդունելության քննություններ չեն լինի. դիմորդները կընդունվեն ատեստատում ունեցած մրցութային առարկաների գնահատականների հիման վրա: Միայն արվեստի մասնագիտությունների գծով կհանձնեն մասնագիտական քննություն: Արհեստագործական ուսումնարաններ նույնպես ընդունվում են ատեստատի գնահատականներով:

Արցախի պետական համալսարանում 2012թ. առկա բաժնում ընդունելություն կկատարվի 26 մասնագիտությունների գծով, հետևյալ բաժնում՝

13: Շատ փոփոխություններ չեն կատարվել այս ուսումնականում, բացի երկու մասնագիտությունից: Առաջինը վերաբերում է տնտեսագիտության բուհին. նախկինում ԱրՊՀ-ն ընդունելություն էր կազմակերպում երկու մասնագիտությունների գծով՝ ֆինանսներ և հաշվապահական հաշվառում: ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանի խոսքով՝ ուսումնասիրելով մեր հանրապետության պահանջարկը, եկել են այն հանգաման, որ պետք է կատարվի այս մասնագիտությունների օպտիմալացում: Դրա համար կան մի քանի հիմնավորումներ: Նախ՝ բոլոր դասական համալսարաններում մասնագիտությունների օպտիմալացում կատարվում է: Նույն արվել է և ԱրՊՀ-ում: Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում մասնագիտությունների փոխարեն այս տարի ընդունելություն կկատարվի **տնտեսագիտության տնտեսություն** մասնագիտությամբ: Նախկինում ընդունելություն կատարվում էր երկու մասնագիտություններով, յուրաքանչյուրում՝ ավելի քան 40 հոգի: Արդյո՞ք մեր հանրապետությունն այդքան պահանջարկ ունի՝ ամեն տարի 80 տնտեսագետ ընդունելով: Բնականաբար, ոչ: Այստեղից էլ՝ երկրորդ հիմնավորումը. օպտիմալացում պետք է կատարվի: Տնտեսագիտության տնտեսություն մասնագիտությամբ սովորողները դարձյալ ստանում են տնտեսագետի որակավորում: Երրորդ հիմնավորումն այն է, որ մագիստրատուրա ընդունվելիս դիմորդը շատ հաճախ փոխում է մասնագիտությունը: Այսպես, ֆինանսներ ավարտածն ընտրում է կառավարումը: Դա նշանակում է, որ նա տվյալ մասնագիտությունից պետք է հանձնի քննություն: Եվ այստեղ մեծ տարածայնություններ են առաջանում: Ու որպեսզի նման բան չլինի, տնտեսագիտության տնտեսություն մասնագիտությունն ավարտելով, դիմորդն ազատ կարող է ընտրել իր նախասիրած մասնագիտությունը և առանց խոչընդոտի, լրացուցիչ քննություն հանձնելու ուսումը շարունակել մագիստրատուրայում:

Այսու նոր մասնագիտությունը **օգտակար հաստատության հետազոտում և մշակում** մասնագիտությունն է: Ինչպես հայտնի է, մեր հանրապետությունում վերջին ժամանակներս բուն թափ է ստանում օգտակար հաստատության կառավարների ուսումնասիրումն ու օգտագործումը: Բայց մասնագետների խիստ պակաս կա: Հանդիպումները ոլորտի զարգացմամբ շահագրգիռ մարդկանց հետ բերել են այն համոզման, որ ԱրՊՀ-ում պետք է պատրաստվեն այդ մասնագիտության գծով կարդեր: Ս. Դադայանն ասաց, որ ՀՀ բուհերի հետ ունեն պայմանավորվածություն, որտեղ պատրաստում են այդպիսի մասնագետներ: Եվ հնարավոր է համարում տեղում այդ մասնագետների պատրաստումը, բայց դա չի նշանակում, թե ուսումնական ողջ գործընթացը կկազմակերպվի ԱրՊՀ-ում: Կարող է պատահել՝ 2-3 ամսով ուսանողների խումբը գործուղվի երևանի պետական կամ ճարտարագիտական համալսարաններ՝ մասնակցելու բազային բուհերում ուսումնական գործընթացին:

Արդեն երկրորդ տարին է՝ ԱրՊՀ-ում գործում է **տեղեկատվական կառավարման համակարգեր** մասնագիտությունը: Ելելով պահանջարկից՝ գործընթացը կշարունակվի: Ռեկտորը տեղեկացրեց, որ ԱրՊՀ-ն ունի պայմանավորվածություն համապատասխան բուհերի ղեկավարության հետ: Առաջին հերթին՝ երևանի հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի: Պայմանավորվածություն ունեն նաև Մոսկվայի կապի և ինֆորմատիկայի տեխնիկական համալսարանի հետ:

Ինչ վերաբերում է գրականությանը, այդ հարցում կարող է օգնել համալսարանի հարուստ էլեկտրոնային գրադարանը: Բացի այդ, ԱրՊՀ-ն հնարավորություն ունի տարբեր երկրների համալսարանների հետ կապ հաստատել օն-լայն ծրագրով, ունի 9 մասնագիտացված լսարան՝ կառավարված ժամանակակից սարքավորումներով, ինչը նույնպես հնարավորություն է տալիս հեռավար դասախոսություններ լսել:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի համար, ըստ ռեկտոր Վարդան Հակոբյանի, այս տարին առանձնահատուկ է նրանով, որ շենքային նոր պայմաններում կսկսվի նոր ուսումնականը: Այն կունենա մարզադահլիճ, տարբեր առարկայական կաբինետներ, համալրված բարձրակարգ դասախոսական կազմ: Նրա համոզմամբ, այս ամենն իր բարեբար ազդեցությունը կթողնի ուսման գործընթացի վրա: Բուհի հետ կապված՝ կա մի կոնկրետ հանգամանք. արդեն մեկ տարի է՝ այստեղ ստանում են միջին մասնագիտական կրթություն՝ իր առավելություններով: Իհարկե, կարևոր է մասնագիտության ճիշտ ընտրությունը: Հաճախ ենք ականատես լինում, որ ոչ հարակից մասնագիտություններով գալիս են մագիստրատուրա՝ բոլորովին իրենց մասնագիտության հետ կապ չունեցող ուղղությամբ, որովհետև ժամանա-

կին ճիշտ ընտրությունը չեն կատարել: Բայց բուհին կից քոլեջի առկայությունը, մի բան, որ հատուկ է աշխարհի առաջնակարգ բուհերին, հնարավորություն է տալիս, որ երեխաներն ավելի վաղ հասակից կարողանան կողմնորոշվել: Միջին մասնագիտական կրթությունը հնարավորություն է տալիս, որպեսզի սովորողները հմտանան գիտելիքները գործնականում կիրառելիս:

Կարդեր պատրաստելու գործում բուհերից յուրաքանչյուրն իր ծառայությունն է մատուցում հասարկությանը, և աշխատանքային բավականին ընդլայնվում է: Վ. Հակոբյանը գտնում է, որ յուրաքանչյուր բուհ իր ձեռնարկումներով պետք է արձագանքի թե՛ պետական պահանջներին և թե՛ աշխատանքային և արժանավոր մասնագետներ պատրաստի երկրի համար: Ու այդ առումով բուհերի խնդիրը պետք է լինի շեշտը դնել որակի վրա: Իսկ այդպիսի մեծ առաքելություն իրականացնելու համար պետք է և՛ որակյալ պրոֆեսորադասախոսական կազմ պատրաստել, և՛ լավ ընդունելություն կատարել ու միաժամանակ գիտակրթական բարձր մակարդակի գործունեություն ծավալել՝ ներառելով նաև արտերկրի և մասնավաճող Հայաստանի լավագույն ուժերին, ինչին էլ ուղղված է բուհի գործունեությունը:

ՈՂՂ ԳՐԱՐԱՅԻՆ ԱՎՏՈՒԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԿԱՒԻ ՄԱՍՆԱԾՅՈՂՈՂ մայր բուհի երեք մասնաճյուղերից մեկն է և ամենածեղ: Նպատակն է հանրապետության գյուղատնտեսությունը համալրել որակյալ մասնագետներով: Ընդամենը երեք տարվա պատմություն ունի մասնաճյուղը, բայց, դեկան Արտակ Դուլյանի կարծիքով, հասցրել է իր տեղն ունենալ Արցախի բուհական դաշտում: 2012-2013 ուստարում մասնաճյուղը ներկայանում է 20 մասնագիտություններով: Այն երեք աստիճանի կրթություն է ապահովում՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր, բակալավրիատ և մագիստրատուրա: Մասնաճյուղի զարգացման իր մեծ նպաստն է բերում մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմը: Վերջերս այստեղ բացվեց հեռավար ուսուցման կաբինետը և, դեկանի տեղեկացմամբ, առաջին փորձերն արդեն արվել են: Մայր բուհի ճանաչված մասնագետները հեռավար ուսուցումը դասախոսություններ են կարդացել ուսանողներին համար: Նաև առաջին անգամ շատ լուրջ զարկ տրվեց փորձուսուցմանը մայր բուհում: Սրանք այն մասնագիտություններն են, որոնք ավելի շատ պրակտիկ ուղղվածություն ունեն: Այս տարի 4-րդ կուրսից 12 հոգի՝ անասնաբույժներ և ագրոնոմներ, ուղարկվեցին Երևան, որտեղ նրանք մեկշաբաթյա փորձուսուցում անցան: 2012-2013 ուստարվա մասնագիտությունները մնացել են նույնը, փոփոխություններ չկան: Դեկանը ցավով նշեց, որ երրորդ տարին է՝ չհամարվելու պատճառով որոշ խմբեր չեն ձևավորվում: Բայց բոլորն էլ պահանջված մասնագիտություններ են, ասենք՝ ագրոէկոլոգիա, ապրանքագիտություն, ագրոբիոգեն, շուկայաբանություն: Սրանք աշխարհում հրատապ մասնագիտություններ են: Նա հույս ունի, որ այս ուսումնականում բուհը կհավաքի համապատասխան կոնտինգենտ, որովհետև աշխատանքային ունի պահանջարկ:

Մեծարժան Մաշտոց համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանի տեղեկացմամբ՝ այս տարի բուհում բոլոր մասնագիտությունների գծով գործում է մագիստրատուրա: Առկա բաժնում ընդունելություն կկատարվեն 11 մասնագիտությամբ, հեռավար բաժնում՝ 8: Բուհը պայմանավորվածություն ունի Դոնի Ռոստոմի հարավային ֆեդերալ բուհի և Երևանի հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հետ: Մայրաքաղաքային բուհերի պրոֆեսորադասախոսական կազմին ներգրավելն այս բուհի կարևոր գործնականություն է: Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագիտությունն այստեղ գործում է համեմատաբար վաղ, արդեն 5 թողարկում է տվել, որոնք հաջողությամբ աշխատում են պետական և մասնավոր սեկտորներում: Բուհը կշարունակի սկսած նախաձեռնությունը սահմանամերձ գյուղերի համար անգլերենի ուսուցիչներ պատրաստելու ուղղությամբ՝ վարձավճարի 50 ուղևոր գեղով: Քանի որ հեռավար սովորողներն հիմնականում աշխատում են ինքնուրույն, նրանց համար պատրաստել են գիտամեթոդական ձեռնարկներ: Կազմակերպվող խմբային աշխատանքն ուղղված է այն բանին, որ ուսանողներին սովորեցնեն սովորել, ինչպես արվում է արտերկրի բուհերում, և որը մեզանում դեռ արմատավորված չէ: Դեռևս ուսանողներ չեն փոխանակում արտերկրի բուհերի հետ՝ թեկուզ Հայաստանի: Բայց պարտադիր է, որ թեկուզ մեկ կիսամյակ ուսանող սովորի արտերկրի բուհում: Հաշվի չեն առնվում կրեդիտները, որն ինտեգրման պայմաններից մեկն է: Մի խոսքով, կրթական համակարգին ինտեգրվելու ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան, որի ուղղությամբ էլ աշխատում են:

Շուշիի Արեն Սաջադյանի անվան հումանիտար քոլեջը 2012-2013 ուստարում նախատեսում է ընդունելություն կազմակերպել առկա բաժնում՝ 6, հեռակա բաժնում՝ 3 մասնագիտություններով: Այս տարի նորամուծություն է կատարվել առկա ուսուցման համակարգում. կգործի **բատերակալ արվեստ բաժինը**, որը մտցվել է՝ հաշվի առնելով ինչպես պահանջարկը, այնպես էլ ԼԳՅ նշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի թատրոնի և կինոյի ինստիտուտի ղեկավարության առաջարկությունը: Ընդունելությունը կատարվում է հիմնական կրթության բազայի վրա՝ առանց քննությունների, իսկ հեռակա բաժնում՝ միջնակարգ կրթության հետքի վրա: Քոլեջի տնօրեն Արա Յայրապետյանը տեղեկացրեց, որ Երևանի կինոյի և թատրոնի ղեկավարություն հետ ունեն պայմանավորվածություն վարպետության դասերի կազմակերպման ուղղությամբ: Քոլեջն ապահովված է որակյալ կրթություն իրականացնելու անհրաժեշտ բոլոր միջոցներով՝ բացառությամբ շենքային պայմանների: Բոլոր մասնագիտությունների գծով գոյություն ունի բավարար կաբինետային համակարգ: Այս ուսումնականից քոլեջն ունի համակարգչային նոր կաբինետ, որը բարձր արագության կապով միացված է համացանցին: Քոլեջն ունի մասնագիտական բավարար բազա: Տնօրենն առանձնահատուկ շեշտեց ռադիոտեխնիկայի բաժինը, որը մասնագետներ է պատրաստում ՊԲ, հատկապես հակաօդային պաշտպանության գործերի համար: Դասավանդողներն էլ ՊԲ-ից են, կոնկրետ՝ Շուշիում տեղակայված գումարտակից: Իսկ ուսանողները փորձուսուցումն անց են կացնում ինչպես ՊԲ զորամասի գումարտակից, այնպես էլ ամհատ ռադիոտեխնիկների մոտ և շփում են ունենում անընդհատ զարգացող տեխնոլոգիաների հետ:

Նախնական մասնագիտական կրթություն հանրապետությունում իրականացվում է երկու՝ **Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարաններում:** Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի տնօրեն Լավրենտ Գաբրիելյանի տվյալներով՝ այստեղ ներկայումս սովորում է 236 հոգի: Նրա արտահայտությամբ՝ միայն կույրը կարող է չնկատել վերջին 2-3 տարիներից ուսումնարանին հասկացվող ուշադրությունը: Օգնում են և՛ պետությունը, և՛ բարերարները, և՛ համահայկական հիմնադրամը: Վերջերս այստեղ հովանավորությամբ բացվել է երկու հիմնակի արհեստանոցներ՝ փայտամշակման և տեխնիկայի վերջին խոսքին համահունչ համակարգչային դասարան: Ուսումնարանն ընդունելություն է կատարում 19 մասնագիտությամբ: Գործում է 15 խումբ, որոնց թիվը հավանաբար կավելանա: Բավարարված է մասնագետ կարդերով, տեխնիկական հագեցվածությունը բավարար է (մի քիչ կաղում է վարսահարդարների մոտ): Բացվել է նոր խոհանոց՝ ժամանակակից հարմարություններով: Տնօրենի խոսքով՝ շրջանավարտների ավելի քան 70%-ն աշխատանք է գտնում, և դառնում են որակյալ արհեստավորներ: Մեկ օրինակ. եթե գործող կամ սպիկակատող մի ժամանակ օրով էին վարձատրվում, հիմա՝ ժամով, սանտիմետրով: Չնայած դրան՝ ծնողները ձգտում են անհայման բարձրագույն կրթության տալ իրենց երեխաներին՝ չունենալով համապատասխան գիտելիքներ, որոնք ավարտելուց չեն կարողանում իրենց տեղը գտնել:

Ուսումնարանն ավարտողներն ստանում են դիպլոմ, որն ատեստատ է ծառայում բուն ընդունվելու համար: Սովորողներն ստանում են կրթաթոշակ:

Այստեղ չանդրադարձանք միջին մասնագիտական երեք հաստատությունների՝ **բժշկական, երաժշտական և պարավոնիտի քոլեջներին**, որտեղ նույնպես դիմորդները կարող են իրենց հակումներին համապատասխան մասնագիտություն ընտրել:

Քննարկման վերջում Ս. Ասրյանը հիշեցման կարգով տեղեկացրեց, որ պետական և ոչ պետական բուհերի համար սահմանված են միասնական քննություններ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների «լավ» և «գերազանց» գնահատականներով շրջանավարտները կարող են սահմանված մասնագիտությունների գծով ընդունվել բուհերի համապատասխան բաժինների 2-րդ կամ 3-րդ կուրս: Այս հանգամանքը խթանում է լավ սովորելու ձգտումին:

Մասնագիտության ճիշտ ընտրությունը մարդու հետագա կյանքը կանխանշող գործոններից է: Մեր շրջանավարտները լայն հնարավորություն ունեն իրենց հավուններին, ընդունակություններին և աշխատանքային համապատասխան մասնագիտություն ընտրել՝ ինչպես բուհական, այնպես էլ միջին մասնագիտական ու արհեստագործական կրթություն ստանալով:

Ս. ԽԱԶՍՐՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ՇՈՒՐՋԸ ՍՓՈՒԵԼՈՎ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ



Ա ն - հատուկ էր կան, որոնց համար մանկավարժի մասնագիտությունը կարծես վերուստ որված շնորհ է: Նրանցից մեկը Նաիրա Ասրյանն է, ով անդադար աշխատում է մասնագիտական կատարելության ուղղությամբ, ով մտքի բոլոր թելերով կապված է իր սաներին:

Փորձառու դասվարը գտել է սաների հոգու բանալին: 1974 թվականից մինչ այսօր աշխատելով Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 դպրոցում՝ բազմաթիվ սերունդների է կյանք ճանապարհել՝ վաստակելով ամենքի կողմից սեր ու հարգանք, շուրջ սփռելով ջերմություն և հոգատարություն: Ունենալով պարտքի և պատասխանատվության բարձր գացում, նա սիրով է կատարել իր պարտականությունները՝ շահելով և՛ մանկավարժական կոլեկտիվի, և՛ աշակերտների, և՛ ծնողների մեծ վստահությունը: Նրան կարելի է դիմել ցանկացած հարցով, և նա ունի մարդկանց բարի խորհուրդներ տալու և ինքնավստահություն մերժելու մեծ կարողություն: Դասվար Նաիրա Ասրյանն ունի

դասավանդման իր ուրույն ոճը, մեթոդներն ու հնարները: Նրա խոսքը հուզական է, տպավորիչ, մշտապես ցուցաբերում է ստեղծագործական նախաձեռնություն, ինչի շնորհիվ նրա կազմակերպած բոլոր դասերն ու միջոցառումներն անցնում են բովանդակալից ու նպատակասլաց: Նա մեծ տեղ է հատկացնում մայրենիի ուսուցմանը, զարգացնում աշակերտների բառապաշարը, ապահովում կարդացածի հիմնավոր ընկալումը: Գնում ուսուցչուհին կիրառում է տարբերակված և անհատական ուսուցումը՝ հասնելով բարձր արդյունքների: Նրա սաների մաքեմատիկական խոսքը ճշգրիտ է ու տրամաբանավոր:

Նաիրա Ասրյանն իր սաների առջև բացում է կյանքի և գիտելիքների աշխարհի գեղեցիկ դռները, իր անձնական օրինակով սովորեցնում լինել բարի ու արդարացի, ազնիվ ու կարգապահ, զգալ գեղեցիկը: Մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է վաստակաշատ ուսուցչուհուն, սիրելի գործընկերոջը՝ 60-ամյակի կապակցությամբ, մաղթում երջանկություն, առողջություն, ուժ ու եռանդ և նորանոր հաջողություններ Արցախի համար լիարժեք, բազմաշնորհ սերունդներ պատրաստելու գործում:

Սյրեհ. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ԼԻՆԵԼ ԿՈԶՄԱՆՆ ԱՐԺԱՆԻ

Եթե բարությունը մարդկային կերպարանք ունենար, հավանորեն նման կլիներ մեր հորեյարին:

Լյուկա Աղավեյանը այսօր վաթսուներեք տարեկան է... Իհարկե, դրա մեջ ուրախասանուլու քիչ բան կա, քանզի վաթսուներեք քառասուն է և ոչ էլ հիսուն: Բայց միաժամանակ տխրելու բան էլ չկա, որովհետև եղածը վաթսուներեք է:

Այո, նա վաթսուներեք տարեկան է և իր կյանքի լավագույն տարիները նվիրել է մատաղ սերնդի ուսուցմանն ու դաստիարակությանը ու այսօր էլ երիտասարդական ավյունով շարունակում է իր գործը և լինել կոչմանը արժանի: Նրան մեկ անգամ տեսնողը զգում է, որ նա ծնվել է զուտ մանկավարժ դառնալու համար:

Ծնվել է 1952թ. փետրվարի 5-ին, Մարտունու շրջանի Շեխեր գյուղում, մանկավարժի ընտանիքում: Տեղի ութամյա դպրոցը գերազանց գնահատականներով ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մեծ Թաղարի միջնակարգ դպրոցում: Այն ավարտել է 1969թ. և նույն տարում ընդունվել Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մաքեմատիկա» բաժնի: Բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտել է 1974թ.: Ավարտելուց անմիջապես հետո գործուղվել է Դուզե ճարտարի միջնակարգ դպրոց, որտեղ էլ աշխատել է որպես մաքեմատիկայի ուսուցիչ, այնուհետև նշանակվել նույն դպրոցի ուսնասվար:

1981թ. տեղափոխվել է հայրենի Շեխեր գյուղը՝ անջնջելի հուշեր թողնելով գործընկերների ու սաների սրտերում:

Լ. Աղավեյանը 1982թ. նշանակվել է Կարմիր Շուկայի ավանային խորհրդի նախագահ: Սակայն վաստակաշատ ուսուցիչն իր կյանքը չպատկերացնելով առանց դպրոցի ու աշակերտների կրկին վերադարձավ դպրոց և 2005թ. Մարտունու շրջանային կրթության բաժնի որոշմամբ ճանաչվեց տարվա լավագույն ուսուցիչ: Մասնակցել է Արցախյան ազատագրական պայքարին և միշտ հավատ ու զորություն հարդրել իր սաներին, հավատարմել, որ կգա բաղձալի հաղթանակը:

Նա գերազանց տիրապետում է մաքեմատիկային և այն հետաքրքիր հնարներով ու մեթոդներով մատուցում սաներին: Իր աշխատասիրությամբ ու բարության վայելում է գործընկերների և սաների հարգանքն ու համակրանքը: Առայսօր աշխատում է որպես Շեխերի միջնակարգ դպրոցի տնօրեն:

Շեխերի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներն ի սրտե շնորհավորում են Լ. Աղավեյանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն և ամենայն հաջողություններ աշխատանքում ու անձնական կյանքում:

Շեխերի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԳԵՂԵՑԻԿ՝ ՀՈԳՈՎ, ՄԱՐՄՆՈՎ ԵՎ ԳՈՐԾՈՎ



Էլմիրա Քալաշյան՝ համեստ ու հմայիչ մի կին, վաստակաշատ, բարի, ազնիվ ու անաչառ մանկավարժ: 2012թ. առաջին իսկ օրը լրացավ մեր գործընկերոջ ծննդյան 60-ամյակը: Զավատա՞նք... Այդ ե՞րբ գլորվեցին գեղեցիկ կենսագրության հյուսած տարիները և գունարվելով՝ կազմեցին 60 տարի: Վեց տասնամյակ, որի շուրջ կեսը նվիրել է մատաղ սերնդին: Ծնվել է 1952թ. հունվարի 1-ին, Զադրուբի շրջանի Աղբուլաղ գյուղում: Դեռ ընտանիքով տեղափոխվել են հարևան Եղիլու (Ուխտաձոր) գյուղը: Գերազանց գնահատականներով ավարտել է գյուղի միջնակարգը: 1968թ. ընդունվել է 1971-ին ավարտել է Երևանի կոոպերատիվ տեխնիկումի ապրանքագիտության բաժինը: Այնուհետև ուսումը շարունակել է Մոսկվայի կոոպերատիվ ինստիտուտի Երևանի մասնաճյուղում և այն ավարտել 1977թ.: 1979-ից աշխատանքի է անցել Երևանի կոոպերատիվ տեխնիկումում. որպես դասատու է աշխատել մինչև 1992 թվականը: 1989թ. ընդունվել է 1991-ին ավարտել է Մոսկվայի Ցենտրոսոյուզի կոոպերատիվ ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը: 1995թ. տեղափոխվել է հայրենի գյուղ և 1996-

ին աշխատանքի ընդունվել գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցչուհի: 1999թ. աշխատում է կազմակերպչական գծով փոխտնօրենի պաշտոնում: Նրան սիրում և հարգում են բոլորը: Սիրելի ընկեր Քալաշյան, շնորհավորում ենք ծննդյան 60-ամյակի կապակցությամբ և ցանկանում այնքան երկար կյանք, հաջողություն և համբերություն, որ կարողանաս դաստիարակել դեռ շատ սերունդների: Ապրիլ երկար, եղիր միշտ ջախել, գեղեցիկ և շիտակ:

Ուխտաձորի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

դում է ուղղվածությունը դեպի ապագան: Նրա անձի կայացումը բնութագրվում է բարոյական սկզբունքների կայացմամբ, ինչը նպաստում է աշակերտի ինքնագիտակցման մակարդակի բարձրացմանը: Իմացական շարժառիթներում արտացոլվում է նրա հետաքրքրությունը ոչ միայն գիտելիքների բովանդակության, այլ նաև դրանց կառուցվածքի և ձեռքբերման եղանակների մասին սեփական կարծիք կազմելու պահանջումը: Այս առանձնահատկությունները նկատի ունենալով, ուսումնական գործընթացում նախապատվությունը պետք է տրվի աշակերտների ինքնուրույն մտածողությունը խթանելուն, վերլուծական աշխատանքի նկատմամբ ունեցած հակումները բավարարելուն: Այս ամենը հուշում է, որ ուսուցման գործընթացը պետք է հակված լինի այնպիսի առաջադրանքների, որոնք բավարարեն դպրոցականի՝ ամեն ինչի մասին սեփական կարծիք ունենալու պահանջը, ինչպես նաև ապահովեն ծրագրային նյութի գիտակցված յուրացումը և զարգացնեն իմացական հետաքրքրությունները:

ԴԱՍԸ ՈՒՍՈՒՅՉԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Ե

Ավելի դիպուկ և խոսուն արտահայտություն գտնել հնարավոր չէ: Իրոք, դասի կառուցվածքը, նյութի բովանդակության շարադրանքի ձևն ու ոճը, ուսուցչին և աշակերտներին հատկացվող «դերերը» դասարան է բերում ուսուցիչը, ուսուցչի որոշիչ դեր է խաղում ուսուցչի մանկավարժական վարպետությունը, գիտելիքների խորությունն ու ծավալը, նրա կեցվածքն ու վարվելակերպը: Պարզ է, որ ամենակարող ուսուցիչն անգամ չի կարող ապահովել ուսման բարձր մակարդակ, եթե ուսուցման գործընթացի հիմքում չունենա յուրաքանչյուր դասի համար կառուցված մանկավարժական համակարգ, այսինքն՝ տարրերի որոշակի ընդհանրություն, որը գործում է իրեն հատուկ ներքին գոյատևման օրենքով: Դասավանդման ընթացքում համակարգատեղծ տարրը պետք է ուղղված լինի ուսուցման գործընթացի կատարելագործման հիմնահարցին, մյուս տարրերի ձևավորումն ընթանա այդ տարրերի հետ համաձայնեցված: Զենց մանկավարժական համակարգի հատ-

կություններով և առանձնահատկություններով են բացատրվում նրանում ընթացող ուսուցման գործընթացի հաջողություններն ու անհաջողությունները: Ժամանակակից մանկավարժական համակարգի կազմում կարելի է առանձնացնել մի քանի բաղադրիչ տարրեր. - ուսուցման և դաստիարակության նպատակները, - ուսուցման և դաստիարակության բովանդակությունը, - իմացական ակտիվ գործընթացների կազմակերպումը, մանկավարժական գործունեության կազմակերպչական ձևերը, ուսուցչի ներգործությունը, - աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Դպրոցում որպես ուսուցման գերխնդիր, էլենելով աշակերտների տարիքային առանձնահատկությունից, պետք է ընտրել առարկայի նկատմամբ իմացական հետաքրքրությունների ձևավորման գործընթաց և ղեկավարվել այն պարզ տրամաբանությամբ, որ իմացա-

կան հետաքրքրությունների միջուկը կազմի մտավոր աշխատանքը, ինչը համապատասխանեցված պետք է լինի աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին: Դասավանդման գործընթացում որոշ տեղեկությունների, հասկացությունների ու երևույթների հետ աշակերտներն արդեն ծանոթ են անցած նյութից, սակայն համարանաչելի մակարդակով այդ նյութերին անդրադառնալով անհրաժեշտ է ներառարկայական կապերի բացահայտման ու օգտագործման տեսանկյունից: Աշակերտների՝ արդեն ծանոթ նյութերին անդրադառնալով ներառական կապերի տեսանկյունից մանկավարժության մեջ դիտվում է որպես գիտելիքների նորացում, դրանք ավելի բարձր մակարդակով և այլ տեսանկյունից ներկայացնելու հնարավորություն: Մանկավարժական համակարգի առանձին և կարևոր տարր է համարվում աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելը: Որպես կանոն՝ ավագ դպրոցականի վրա էսպես ազ-

դում է ուղղվածությունը դեպի ապագան: Նրա անձի կայացումը բնութագրվում է բարոյական սկզբունքների կայացմամբ, ինչը նպաստում է աշակերտի ինքնագիտակցման մակարդակի բարձրացմանը: Իմացական շարժառիթներում արտացոլվում է նրա հետաքրքրությունը ոչ միայն գիտելիքների բովանդակության, այլ նաև դրանց կառուցվածքի և ձեռքբերման եղանակների մասին սեփական կարծիք կազմելու պահանջումը: Այս առանձնահատկությունները նկատի ունենալով, ուսումնական գործընթացում նախապատվությունը պետք է տրվի աշակերտների ինքնուրույն մտածողությունը խթանելուն, վերլուծական աշխատանքի նկատմամբ ունեցած հակումները բավարարելուն: Այս ամենը հուշում է, որ ուսուցման գործընթացը պետք է հակված լինի այնպիսի առաջադրանքների, որոնք բավարարեն դպրոցականի՝ ամեն ինչի մասին սեփական կարծիք ունենալու պահանջը, ինչպես նաև ապահովեն ծրագրային նյութի գիտակցված յուրացումը և զարգացնեն իմացական հետաքրքրությունները:

Գ. ԱՍԵՓՈՒՅԱՆ ԳՅ ԿԳՆ ԿԱԻ մասնագետ

ՄԵԹՈԴԱԿԱՆ

Իռացիոնալ թվի հասկացության յուրացմանը նպաստող վարժություններ

Թվի հասկացությունը հանրահաշվի դպրոցական դասընթացի կարևոր հասկացություններից է: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում սովորում են բնական, ամբողջ, ռացիոնալ և իռացիոնալ թվերի հասկացությունները: Հայտնի է, որ իռացիոնալ թվի հասկացությունը առավել դժվար յուրացվողն է: Հողվածում փորձ է արվում վարժությունների և խնդիրների օգնությամբ նպաստել իռացիոնալ թվի հասկացության յուրացմանը: Հողվածում, որոշակիության համար, ռացիոնալ թվերը կնշանակենք r-ով, իսկ իռացիոնալ թվերը՝ α-ով: Աշակերտներին իռացիոնալ թվերի հետ ծանոթացման ժամանակ, սովորաբար, դիտարկում են այսպիսի հարցեր.

1. Երկու իռացիոնալ թվերի գումարը, արտադրյալը կարո՞ղ է լինել ռացիոնալ: Պատասխան: Կարող է, օրինակ, $(-\sqrt{2}) + \sqrt{2} = 0; (2 - \sqrt{3}) + (2 + \sqrt{3}) = 4;$

$\sqrt{3} \cdot \sqrt{12} = 6:$ Բայց ռացիոնալ և իռացիոնալ թվերի գումարը միշտ իռացիոնալ է: Իսկապես, եթե r ռացիոնալ և α իռացիոնալ թվերի գումարը լինել ռացիոնալ՝ $\alpha + r = r_1$, ապա $\alpha = r_1 - r$, և կստացվի, որ իռացիոնալ α թիվը հավասար է r₁ - r ռացիոնալ թվին, ինչն անհնար է:

2. Կարո՞ղ է, արդյոք, ռացիոնալ և իռացիոնալ թվերի արտադրյալը լինել ռացիոնալ:

Պատասխան: Եթե α-ն իռացիոնալ թիվ է, r-ը ռացիոնալ, ապա α·r-ը ռացիոնալ կլինի այն և միայն այն դեպքում, երբ r=0: Իսկ եթե r≠0, ապա rα-ն իռացիոնալ է: Իսկապես, եթե rα-ն հավասար լինել ռացիոնալ r₁ թվին, ապա $r\alpha = r_1$ -ից $\alpha = \frac{r_1}{r}$, կգանք հակասության՝ α իռացիոնալ թիվը հավասար է $\frac{r_1}{r}$ ռացիոնալ թվին:

3. Կարո՞ղ է, արդյոք, $\frac{\alpha}{r}$ կոտորակը, որտեղ α-ն իռացիոնալ թիվ է, r-ը՝ 0-ից տարբեր ռացիոնալ թիվ, լինել ռացիոնալ: Կարո՞ղ է $\frac{r}{\alpha}$ կոտորակը լինել ռացիոնալ:

Պատասխան: Եթե α≠0, ապա $\frac{\alpha}{r}$ -ը և $\frac{r}{\alpha}$ -ն իռացիոնալ թվեր են, եթե r=0, $\frac{r}{\alpha}$ -ն ռացիոնալ է:

4. Ապացուցենք, որ $\sqrt{2} + \sqrt{3}$ -ը իռացիոնալ է: Ենթադրենք հակառակը $\sqrt{2} + \sqrt{3} = r$

(1) հավասարման երկու մասերը բարձրացնելով քառակուսի կստանանք՝ $5 + 2\sqrt{6} = r^2$, և քանի որ հավասարման ձախ մասը իռացիոնալ է, իսկ աջ մասը ռացիոնալ, ուստի այն տեղի ունենալ չի կարող, ուրեմն տեղի չունի նաև (1)-ը:

5. Ապացուցենք, որ $\sqrt{2} + \sqrt[3]{3}$ -ը իռացիոնալ է:

դրական արմատներ՝ $z_{1,2} = \frac{a \pm \sqrt{a^2 - b}}{2}$,

այնպես որ, կարելի է համարել, որ $x = \frac{a - \sqrt{a^2 - b}}{2}, y = \frac{a + \sqrt{a^2 - b}}{2}$:

Դժվար չէ տեսնել, որ $a^2 - b$ արտահայտությունը միշտ ոչ բացասական է, քանի որ $a^2 - b = (x+y)^2 - 4xy = (x-y)^2$: Այսպիսով, $a > 0, b > 0$ պայմաններից կհետևի՝

$\sqrt{a + \sqrt{b}} = \frac{a - \sqrt{a^2 - b}}{2} + \frac{a + \sqrt{a^2 - b}}{2}$ (10)

Հանգումորեն, կստանանք, որ $\sqrt{a - \sqrt{b}} = \frac{a - \sqrt{a^2 - b}}{2} - \frac{a + \sqrt{a^2 - b}}{2}$ (11)

Դիտողություն. նկատենք, որ երբ $a < 0, b > 0$, ապա $\sqrt{a + \sqrt{b}}$

իրացիոնալությունը հնարավոր չէ ներկայացնել ոչ քառակուսային իռացիոնալությունների գումարի, ոչ էլ տարբերության տեսքով: Իսկապես, հակառակ դեպքում կունենայինք՝ $\sqrt{a \pm \sqrt{b}} = \sqrt{x \pm \sqrt{y}}$, որի երկու մասերը բարձրացնելով քառակուսի, կստանանք՝

$a + \sqrt{b} = x + 2\sqrt{xy} + y$, որտեղից էլ $\begin{cases} a = x + y \\ \pm\sqrt{b} = \pm 2\sqrt{xy} \end{cases}$

Ենթադրենք $\sqrt{2} + \sqrt[3]{3} = r$, որտեղից $\sqrt[3]{3} = r - \sqrt{2}$, $3 = r^3 - 3r^2\sqrt{2} + 3r(\sqrt{2})^2 - (\sqrt{2})^3 = r^3 - 3r^2\sqrt{2} + 6r - 2\sqrt{2}$, $3 = (r^3 + 6r) - \sqrt{2}(3r^2 + 2), r^3 + r - 3 = -\sqrt{2}(3r^2 + 2)$, կամ

բայց վերջին հավասարությունը սխալ է, քանի որ նրա ձախ մասը ռացիոնալ է, իսկ աջը՝ իռացիոնալ:

6. Սահմանում $\pm\sqrt[n]{r}$ թվերը, որտեղ $r > 0$ և $r \neq r_0^n$, կոչվում են n-րդ կարգի իռացիոնալություններ:

Ապացուցենք, որ գրոյից տարբեր բոլոր r₁ և r₂ ռացիոնալ թվերի համար $\sqrt[n]{r_1} \neq \sqrt[n]{r_2}$:

Ենթադրենք $\sqrt[n]{r_1} = \sqrt[n]{r_2}$ (2)

(2)-ի երկու մասերը բարձրացնելով խորանարդ, կստանանք՝ $r_1\sqrt[n]{r_1} = r_2$ (3)

սխալ հավասարությունը, հետևաբար, պնդումն ապացուցված է:

7. Սահմանում $\sqrt{r_1}$ և $\sqrt{r_2}$

քառակուսային իռացիոնալությունները կոչվում են նման, եթե նրանց հարաբերությունը ռացիոնալ է: Օրինակ, $\sqrt{18}$ -ը և $\sqrt{2}$ -ը նման իռացիոնալություններ են՝ $\sqrt{18} : \sqrt{2} = \sqrt{9} = 3$: Ապացուցենք, որ նման քառակուսային իռացիոնալությունների արտադրյալը ռացիոնալ է:

Քանի որ, $\sqrt{r_1} : \sqrt{r_2} = r$, ուստի $\sqrt{r_1} = \sqrt{r_2} \cdot r$, որտեղից՝ $\sqrt{r_1}\sqrt{r_2} = r\sqrt{r_2} \cdot \sqrt{r_2} = r \cdot r_2$, այսինքն $\sqrt{r_1} \cdot \sqrt{r_2}$ -ը ռացիոնալ է:

8. Ապացուցենք, որ եթե m-ը և n-ը 0-ից տարբեր ռացիոնալ թվեր են, իսկ $\sqrt{r_1}$ -ը և $\sqrt{r_2}$ -ը քառակուսային իռացիոնալություններ, ապա $m\sqrt{r_1} + n\sqrt{r_2}$ -ը կամ իռացիոնալ թիվ է կամ 0:

Ապացուցում: Եթե $\sqrt{r_1}$ և $\sqrt{r_2}$ նման քառակուսային իռացիոնալություններ են, ապա $\sqrt{r_1} = \sqrt{r_2} \cdot r$, կամ $m\sqrt{r_1} + n\sqrt{r_2} = rm\sqrt{r_2} + n\sqrt{r_2} = (rm+n)\sqrt{r_2}$, բայց $(rm+n)\sqrt{r_2}$ -ը իռացիոնալ է, երբ $(rm+n) \neq 0$, կամ 0, երբ՝ $(rm+n) = 0$:

Իսկ երբ $\sqrt{r_1}$ և $\sqrt{r_2}$ քառակուսային իռացիոնալությունները նման չեն, ապա $\sqrt{r_1}\sqrt{r_2}$ -ը իռացիոնալ է: Իսկապես, եթե,

$m\sqrt{r_1} + n\sqrt{r_2} = r$ (4)


որտեղ $r \neq 0$, ապա (4)-ի երկու մասերը բարձրացնելով քառակուսի, կստանանք՝ $m^2r_1 + 2mn\sqrt{r_1r_2} + n^2r_2 = r^2$, որտեղից՝ $2mn\sqrt{r_1r_2} = r^2 - m^2r_1 - n^2r_2$, ինչը սխալ է:

10. Իռացիոնալ թվի հասկացությունը կարելի է ամրապնդել լուծելով տարբեր օրինակներ հանրահաշվից և երկրաչափությունից: Այսպես, կարո՞ղ են, արդյոք, $2; \sqrt{6}; 4; 5$

Բայց $(x+y)$ -ը դրական է, իսկ $a < 0$: Հակասությունը գալիս է սխալ ընդունելությունից:

Իռացիոնալ թվի հասկացությունը կարելի է օգտագործել նաև երկրաչափական և եռանկյունաչափական խնդիրներ լուծելու ժամանակ:

Խնդիր 1: Գոյություն ունի՞, արդյոք, հավասարակողմ եռանկյունի, որի գագաթները գտնվում են քառակուսային թղթի քառակուսիների գագաթներում: Ենթադրենք, այդպիսի եռանկյունի գոյություն ունի (նկ. 1):



Այդ եռանկյան S մակերեսն արտահայտենք նրա a կողմով՝ $S = \frac{a^2\sqrt{3}}{4}$: Եվ, քանի որ

$S_{ABC} = S_{KBLM} - (S_{AKB} + S_{BLC} + S_{AMC})$, իսկ

վերջին հավասարման աջ մասում թիվը ռացիոնալ է, իսկ ձախ մասում՝ իռացիոնալ, ապա ստացված հակասությունը ապացուցում է ենթադրության սխալ լինելը:

թվերը կազմել թվաբանական պրոգրեսիա: Պատասխան. քանի որ դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ

$\sqrt{6} - 2 = dm$ (5)

$4,5 - \sqrt{6} = dn$ (6)

(5)-ից հանելով (6)-ը կստանանք

$2\sqrt{6} - 6,5 = d(m-n)$, ինչը սխալ է:

Սխալը ստացվել է (5) և (6) հավասարությունների ընդունելությունից, այսինքն այդ թվերը թվաբանական պրոգրեսիայի անդամներ լինել չեն կարող:

11. Ապացուցենք, որ \sqrt{a} և \sqrt{b} քառակուսային իռացիոնալությունների գումարը չի կարող հավասար լինել խորանարդային իռացիոնալությանը: Իսկապես, $(\sqrt{a} + \sqrt{b})$ -ն բարձրացնելով խորանարդ կստանանք՝

$(\sqrt{a} + \sqrt{b})^3 = (a+3b)\sqrt{a} + (b+3a)\sqrt{b}$ (7)

(7)-ի աջ մասը իռացիոնալ թիվ է, ձախը՝ ռացիոնալ: Դժվար չէ նաև ապացուցել, որ $\sqrt{a} \cdot \sqrt{b} \neq \sqrt{c}$:

12. Ապացուցենք, որ եթե $\sqrt{r_1} + \sqrt{r_2} = \sqrt{r_3}$ (8)

ապա այդ իռացիոնալությունները զույգ առ զույգ նման են:

Ենթադրենք, (8)-ը տեղի ունի և

$\sqrt{r_1}, \sqrt{r_2}, \sqrt{r_3}$ իռացիոնալությունները զույգ առ զույգ նման չեն: (8)-ի երկու մասերը բարձրացնելով քառակուսի, կստանանք՝ $r_1 + r_2 + 2\sqrt{r_1r_2} = r_3$ (9)

Որտեղից կհետևի, որ $\sqrt{r_1r_2}$ -ը ռացիոնալ է, կամ $\sqrt{r_1}$ -ը և $\sqrt{r_2}$ -ը՝ նման են, կամ էլ $\sqrt{r_1} = r\sqrt{r_2}$, իսկ այդ դեպքում (8)-ից կհետևի, որ $\sqrt{r_3}$ -ը և $\sqrt{r_2}$ -ը նման են, կամ էլ $\sqrt{r_1}$ և $\sqrt{r_3}$ -ը նման իռացիոնալություններ են:

Ապացուցվածից հետևում է, որ $(\sqrt{2} + \sqrt{3})$ -ը չի կարող հավասար լինել որևէ \sqrt{r} -ի:

13. Փորձենք պարզել, $\sqrt{a + \sqrt{b}}$ բարդ իռացիոնալությունը երբ է հնարավոր ներկայացնել երկու քառակուսային իռացիոնալությունների գումարի (տարբերության) տեսքով:

Թող $a > 0, b > 0$: Նշանակելով

$\sqrt{a + \sqrt{b}} = \sqrt{x + \sqrt{y}}$ և երկու մասը բարձրացնելով քառակուսի, կստանանք՝ $a + \sqrt{b} = x + y + 2\sqrt{xy}$, որտեղից՝

$\begin{cases} x + y = a \\ xy = \frac{b}{4} \end{cases}$

Վերջին համակարգը լուծելու համար կազմենք $z^2 - az + \frac{b}{4} = 0$ հավասարումը, և

քանի որ $a > 0, b > 0$, այն կունենա

Խնդիր 2: Ապացուցենք, որ $\sin 1^\circ$ -ը իռացիոնալ թիվ է:

Ենթադրենք հակառակը՝

$\sin 1^\circ = \frac{m}{n}$:

$\sin^2 1^\circ + \cos^2 1^\circ = 1$ նույնությունից՝

$\cos^2 1^\circ = 1 - \sin^2 1^\circ$ -ը ևս կլինի ռացիոնալ:

Բայց $\cos 2^\circ = \cos^2 1^\circ - \sin^2 1^\circ$,

հանգումորեն՝ $\cos 4^\circ = \cos^2 2^\circ - \sin^2 2^\circ, \cos 8^\circ = \cos^2 4^\circ - \sin^2 4^\circ,$

$\cos 16^\circ = \cos^2 8^\circ - \sin^2 8^\circ$

արտահայտությունները ևս կլինեն ռացիոնալ: Մյուս կողմից

$\frac{\sqrt{3}}{2} = \cos 30^\circ = \cos(32^\circ - 2^\circ) = \cos 32^\circ \cos 2^\circ +$

$+ \sin 32^\circ \sin 2^\circ = (2 \cos^2 16^\circ - 1) \cos 2^\circ +$

$+ 2^4 \cos 16^\circ \cos 8^\circ \cos 4^\circ \cos 2^\circ \sin^2 2^\circ$:


Ստացված արտահայտության ձախ մասը իռացիոնալ է, աջը՝ ռացիոնալ: Հակասությունը ստացվել է ընդունելությունից, որ $\sin 1^\circ$ -ը ռացիոնալ է, հետևաբար, այն իռացիոնալ է:

Պնդումն ապացուցված է:

Որոշելու Հարությունյան, ՀՊԱՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, Գայանե Առաքելյան, ԱրՊՀ ասպիրանտ

ԴԻՍԱՆԿԱՐ

ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՆԿԱԿԱՐԺԸ, ԲԱՆԱՍՏԵՂԸ



ստեղծելու, ստեղծագործելու բնական պահանջով ու լուսավորությանը, հույսով, հավատով ու հավատալիքներով, ազնվությամբ, բարությանը, ծայրաստիճան ուղղամտությամբ ու մանկամտությամբ:

Որքա՞ն դիպուկ ու գեղեցիկ է նա բնութագրում իր «Գրառուներ ծոցատետրից» գրքում մեզ՝ հայերին. «Մենք մեր քարտիճն ծաղիկ ենք ցանում, քարը քնքշանում ու ծիծաղում է: Իսկ դո՞ւք... Ո՛ր է թե դուք էլ քար լինե՞իք»:

Իսկ իր անսահման սերը հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ սեղմ, անկեղծ ու գեղեցիկ այսպես է նա քանդակել նույն գրքում. «Ուրիշ պաշտամունք չունեն հայ ժողովրդից բացի: Բոլոր հին ու նոր աստվածները նսենանում են նրա տիեզերական լուսավառի առաջ»: Կամ՝ «Ի ծնե մերված են քո ոգու գեղեցկությանը, ինչպես Արևին: Հավիտենական Հայ, հավիտենական Արև»: Իսկ սա էլ դարաբաղու դիպուկ բնութագրումն է՝ «Դարաբաղուն ասացին՝ համառ են ու հաստակող: Ասաց՝ ես սարի խոտ չեմ, որ պատահած քամին ուղր-ուղր ասնի»: Եվ նման շատ ու շատ խոհափիլիսոփայական ընդհանրացումներ:

«Կյանքը լցված բաժակ է կեղծիքով ու դառնությամբ»:

«Պարապությունը հիվանդություն է, որ բուժվում է միայն... աշխատանքով»:

«Սարսափելի է, երբ մարդուն միայն հարազատն է ժպտում»:

Ես խորապես համոզված եմ՝ անչափ ուրախ, հպարտ ու երջանիկ է Լևոն Հարությունյանը, այդ մեծ հայրենասերն ու հայասերը, հարազատ լեռնաշխարհի ցավ ու հոգսերով, նրա ցավալի ճակատագրով այնքան տառապած հայրենասեր աշակերտ... Երջանիկ է Լևոնը, որ ավելի քան կես դար գրածանաչ ու աշխարհաճանաչ է դարձրել հայրենի եզերքի երազուն երեխաներին, Արցախի ազատամարտի ծանր տարիներին հրապարակած իր հուզիչ, հայրենասիրական ելույթներով, հողվածներով ու ակնարկներով, իր կրթոտ ու ցասունալի խոսքով ոգևորել ու խանդավառել է սրբազան պայքարի ելած կտրիճ հայրենակիցներին...

Տեղին է այստեղ մեքերել մի հատված նրա «Ոգու հավերժությունը» ակնարկից: «Դյուցազնական Հայկ նահապետը գերադասում էր չապրել, քան ապրել ստրկական կյանքով: Ծնկաչոք ապրելուց կանգնած մեռնելն է լավ: Երջանիկ մահ՝ զենքը ձեռքին, բռունցքները սեղմած, ազատ ապագայի երանելի ժպիտը դեմքին: Հիշենք Միքայել Նալբանդյանի դասագրքային դարձած հոյակապ տողերը, որ կարծես նոր իմաստ են ստանում ազատագրական պայքարի այս օրերին...»:

Իսկ ինչպիսի՞ ցավ ու արդարության պահանջ կա այս սարսափալի տողերում՝ «Մենք հավերժի ճամփորդներ ենք» հողվածից. «Վաղուց է զարմանքը զարմացել, ապշել այն ամենից, ինչ կատարվել ու կատարվում է այս լուսացույց հողում: Սունգայիթ, Բաքու, Գանձակ, Գետաշեն, Նոյեմբերյան, Բերդաձոր... ո՞ր մեկը թվես: Մի արյունոտ շղթա, որ ձգվում է... Գողանում են, թալանում են, սպանում են, կեղծում են, խա-

բում են... մնում անպատիժ»:

Իսկ Մոսկվա, Կրեմլի ջոջերին իր և 50 բազմավաստակ վետերանների անունից նրա հղած պատմական նամակը Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին միացնելու հարցի առթիվ, նրա հետ Լիլյա Մկրտչյանի հույժ հրատապ հարցազրույցը, «Արյունոտ առավոտ» նրա կակնավի հողվածը Ավրուռ անտառագարո գյուղակում թուրք ոհմակների կատարած վայրագությունների ու ամենը մարդկանց սպանությունների շուրջ...

Բոլորն էլ հրատապ են, ցասունալի, հոգեցունց, որ համբավ, փառք, պատիվ ու անմահություն են բերում հեղինակին...

Բա «Նշխարները»... Ամեն մեկը մի աշխարհ, կենարար ու ինքնաբերական ծիծաղ, արցախցու գուլալ ոգուց ծարձակած ծաղիկ-ծվեն, նրա մշտական ստեղծագործ մտքի խոսուն առիվատյաց, որ պրպտուն բանահավաքը տասնամյակներ շարունակ մասնիկ առ մասնիկ ժողովել է, շտկել, «պարզաջրել», ամեն արցախցու, աշխարհասփյուռ ամեն մի հայի սեղանագարդը դարձրել:

Ինչքա՞ն բարեհունչ են, անմիջական ու մտերմիկ արցախյան խաղիկները...

Այ աղջիկ, ծամավ աղջիկ, Դռներդ շաման աղջիկ, Աչք-ուներդ խելքս տարավ, Մեղրահացա համով աղջիկ:

Մեր աշխարհը սարոտ ա, Չորս-բոլոր ծաղկահոտ ա, Բնիր-վեր կաց, բախտ օգի, Գեղեցկությունը տտ ա:

Գարունը գա, բարով գա, Բույրերով գա, մորով գա, Նշան բերող էն տղան Ոսկին պետք չէ, սիրով գա:

Արտեն մաշին դուշ կընի, Զոլեն յիրա փուշ կընի, Երնեկ տան են աղջկան, Որ սիրածին թուշ կընի:
Եվ այսպես՝ 60-ի հասնող բոլոր խաղիկները: Երգիծանքի անզուգական մունչ է «Այան մեռավ» հորինվածքը, որ ինքնաբերական լիաբոք ծիծաղ է հարուցում: Եվ այդ ծիծաղը, բնական է, անպաճույճ, ի հեծուկս արդի հեռուստավեցուտոցների...

Վերցնենք հենց այս առաջին մանրապատումը «Ձվարձախոսություններից»՝ «Համոթ նրա համար»:

«Հարսանիքի հրավիրողների ցուցակ էին կազմում.

- Պապ, Մուքան խնամուն ա- նունն էլ կյիրի՞մ, ուրան տղեն հրք- նընքավը մեզ ծեն չի տվալ:

- Կյիրի, բայց վեր եկավ՝ համոթ նրա միարք»:

Ավելի ծիծաղաշարժ, տպավորիչ ու մտապահ են «Բեզ էլ տեսած չքի- դի», «էշին պեմը վեր կալ՝ կյան ըմ», «Կեցցես, Օսեփ», «Սիկունց Լուսիկի դիմունը», «Պարավ ըս եկալ», որն ուզես...

Իսկ ինչքան սրամիտ է այս մեկը, ցայտուն՝ արցախցուն բնութագրելու համար.

- Արտաշ, խե՞ տի կարճ ըս մնա- ցալ:

- Բոյ պիժիմիլիս են ըմ իլալ խել- քեն հերթունը...

Շատ խորիմաստ ու առատ է «Նշխարների» առածանին, ամեն

մեկը մի պոեմ, մի շողշողուն մար- գարիտ՝

• Մինը օտուն ա, մինը եշուն:

• Մղափուն հայ, վեր քյուհավ ըղ- նող ա:

• Մրթնպան էլ ինիս, մինակ խեղճդ տեղն ընի: Ծորսպան էլ ի- միս, վեր խեղճ չընի, հաշել ըրա մր- թնպան ըս...»:

Լուրջ դրվատանքի է արժանի հեղինակը՝ որպես դարձվածներ հավաքագրող, բարբառային ար- տահայտությունների, տեղանունների ու բառերի սպառիչ մեկնաբանող ու ստուգաբանող, առավել ևս՝ որ- պես բառարանագետ ու լեզվաբան: Այս ամենը վկայում է, որ Լևոն Հարությունյանն իրոք, 20-21-րդ դա- րի հայ իրականության, մանկավար- ժության, ժողովրդական բանահյու- սության ու գրականության ասպա- ռեզի մնայուն երևելիներից է, որ մեր կարծիքով, համալրում է մեր դասա- կանների շարքը:

Ուզում են վերջին ընդհանրա- ցունս հավաստի մեկնաբանել՝ խո- սելով նրա անուզական բանաս- տեղծությունների «Կարոտի կանչ» ժողովածուի մասին: Ես պարզապես չեմ հազեցնում այն կարդալուց, հո- գով սքանչանալուց, ողջ էությանը ըմբռնելուց: Գրքի լիարժեք ու սպառիչ գրախոսումը թողնենք մի ավելի լուրջ ու նրբին մասնագետի ու խոսենք զոմե որպես ընթերցող, մոլի բնարտագետ:

Լինելով հայ չափածո գրակա- նության սիրահար՝ համոզված եմ, որ միանգամայն ինքնատիպ, նո- ռառճ, շնորհալի հանգավորող, բա- նաստեղծ ու բառաստեղծ է հեղինա- կը:

Սևանի լուրթ ակից Մի բուռ ջուր է ցայտել, Սամուշակ է դարձել Ամեն կաթիլ:
Եվ բույրը Սևանի՝ Ծաղկած իր շրթունքին Սփռում է ամենուր Փաթիլ-փաթիլ:
Նրա գրքում և խորախոսի փիլի- սոփայություն կա՝
Ծնվելը տուտ է, ծնվելը՝ մի՛Ֆ, Մեռնելը՝ դաժան ու անպատիվ, Ապրե՛լը...
Այդ էլ դու իմացիր:
Եվ պատկերավոր, անկեղծ հայ- րենասիրություն՝

Հայրենի հող, հայրենի հող, Կորսված գառնուկ-հայրենի հող, Որ մայուն ես՝ սրտիս զարկով, Որ մայուն ես աղեկտուր:
Ես կմեռնեմ, կողողանջեմ, Իմ կրծքի տակ, Իմ իղձերով արնաշաղախ, Իմ կարոտով դեռ մշուշված Հայրենի հող:
Լսո՞ւմ ես ինձ, բախտ իմ ան- միճ,

Ե՞րբ կտեսնեմ և կտեսնե՞մ Մեղքիս պես ջիճ,
Կապույտ երկինք, հայրենի հող:
Եվ բնապատկերի գեղագիտա- կան զգացողություն՝
ժայռի բացված աչքից Կաթկթացող ջուրը Զանգի ձայն է հանում:

.....
Չիզ լեռներ են իրար կողքի, Իրար հենված հավերժ Ու ժայռեղեն իրենց գրկում Զնած ոսկեարփի...

Ես ակամայից մտաբերեցի մեր անմահ Համոյի «Որոտանի եզեր-

քը»: Իրոք որ անկրկնելի դարաբա- ղյան բնապատկեր... Ուղղակի նա- ռեկյան բուրմունք է ծորում այս ման- րաբանդակի՝ երազուն, լավատես: *Երկնքում վարդեր են փնտրում Ու բարի աչքեր են փնտրում իմ աչքերը,*

Սարերում վարդեր են փնտրում, Վարդերում սրտեր են փնտրում, Ծովի մեջ ափեր են փնտրում, Ամենուր վարդեր են փնտրում, Վարդերով սրտեր են փնտրում իմ աչքերը:

Քանի որ «մահը մերն է, մենք մա- հինը», «մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական», ապա, ան- շուշտ, մեր հարգարժան Լևոնը «մարդ եկել է ու մարդ կեթա աշ- խարհից...» և «իր գործով կապրի անվերջ, անդադար»՝ թողնելով այս- պիսի ազնվագույն ու սուրբ կտակ. *Սիրտս հանեմ, մաս-մաս անեմ, Չեզ բաժանեմ ու նոր գնամ: Անլույս, տխուր հոգիներին Հույս ու հավատ, ծիծաղ շաղեն, Կարկաչ մաղեն ու նոր գնամ:*

Բարին օրհնեմ, չարը տանեմ, Ցավը տանեմ, դավը տանեմ, Թույնով լցված համբերության Գավը տանեմ... ու նոր գնամ:

Մերկ են գնում, ձեռքով դա- տարկ, Բայց աչքերս կակիծով լի, Սյրպես է կարգն այս աշխարհի: Բուռս բացեմ, ափս ապրզեմ, Ի ցույց դնեմ ընչաքաղցին Ու նոր գնամ:

Սա էլ հենց, երևի նրա ողջ մե- ծարձեք ու հարուստ գրական ժա- ռանգության պսպղուն լուսապսակն է, նրա առելցուն ու շունդալից կյան- քի կարոտաբույր կտակը:

Շատ բան կա ասելու, բայց, այս- քան էլ, ինձ թվում է, բավական է, հարգելի ընթերցող, ակնբախտեն համոզվելու, որ սույն ակնարկի իմ այս նորահայտ հերոսը, իրոք, շատ ինքնատիպ, բազմաշնորհ ու բարձ- րակիրք անհատականություն է, ար- դեն հանրահայտ մանկավարժի, գիտնական-լեզվաբանի, բանահա- վաք-բառարանագետի, իրաշունչ հրապարակախոսի, հուզաթրթիռ բանաստեղծի և լայն ժողովրդակա- նություն վայելող հասարակական- քաղաքական գործչի համբավ ձեռք բերած մի ուրույն մարդ, որն այդ փառքին արժանացել է ավելի քան 60-ամյա տքնաջան աշխա- տանքի, քննախույզ պրպտունների ու բողոքանավեր խիզախումների շնորհիվ...

Եվ հիմա պահն իրոք շատ հար- մար է, ամձամբ իմ կողմից, կուբա- նաբնակ արցախցի, սյունեցի և աշ- խարհասփյուռ հայ ընթերցողի ա- նունից՝ մեծ երախտագիտություն և խորին շնորհակալություն հայտնել հարգարժան Լևոն Հարությունյա- նին, մաղթել նրան ուրախ ու արև օրեր, բուռն, արարուն կյանք՝ ի փառս առասպելական Արցախի և ամբողջ հայ մշակույթի վերըմծուղ- ման ու ծաղկման...

Հիրավի, նա արժանի է կոչվելու «Պատվավոր արցախցի»:

Սարգունի ԱԼԵՋԱՆՅԱՆ
Ռուսաստանի հայերի փոլության Կրասնոդարի երկրամասի Սեւերսկի շրջանի ԱՖիակի ավանային բաժանմունքի Նախագահ ՌԳ Ժուռնալիստների

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՉԵԽՈՎԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի. ել՛լ դեմքը, և՛ հագուստը, և՛ հոգին, և՛ մտքերը... Ա.Պ. Չեխով

Հունամիզմը ֆեոդալակերական աշխարհայացքի դեմ մղվող պայքարում ձևավորված հասարակական մտքի հոսանք է, որը կողմնորոշված է դեպի երկրային կյանքը, ջատագովում է մարդուն, քարոզում է մարդկանց ազատության և երջանկության իդեալներ: Հունամիզմի առանձին գաղափարներ դրսևորվել են հոգևոր մշակույթի զարգացման վաղ շրջաններում (ժողովրդական բանահյուսության, դիցաբանության, հակաֆեոդալական աղանդավորական գաղափարների մեջ, առանձին մտածողների աշխարհայացքում), սակայն որպես հայացքների ամբողջական համակարգ և հասարակական մտքի հոսանք, այն ձևավորվել է Վերածննդի դարաշրջանում: Հունամիզմը դարձել է արվեստի, փիլիսոփայության, գրականության, բնական և հասարակական երևույթների արժեքավորման, մարդու եռության բացահայտման, կղերաֆեոդալական գաղափարախոսության դեմ պայքարի և աշխարհիկ կյանքի իմաստավորման հիմնական չափանիշ: Որպես այդպիսի՝ 14-15-րդ դարերում հունամիզմը տարածվել է Իտալիայում (Ֆ.Պետրարկա, Ջ. Բոկաչչո, Լեոնարդո դա Վինչի, Ֆ. Ռաբլե), Անգլիայում (Վ. Շեքսպիր, Ֆ. Բեկոն), Իսպանիայում (Մ. Սերվանտես), Գերմանիայում (Ու.Գուտեն, Ա. Դյուրեր), Նիդեռլանդներում (Երազմ Ռոտերդամցի): Հունամիզմի գաղափարները զարգացրել են հատկապես 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչները (Ֆ. Վոլտեր, Ժ.ժ. Ռուսո, Գ. Դիդրո և ուրիշներ): Այդ գաղափարները հասարակական-քաղաքական խնդիրների հետ զուգակցեցին ռուս հեղափոխական դեմոկրատները՝ Վ. Բեկինսկին, Ա. Գեղեցեղ, Ն. Չերնիշևսկին, Ն. Դրբորյուբովը և նրանց գաղափարական համախոհները:

Հունամիզմի գաղափարներով են տոգորված նաև ռուս գրականության ռեալիստական լավագույն ավանդույթների ժառանգորդ ու շարունակող, ռուսական արձակի սկսանքներից մեկի՝ Ա.Պ. Չեխովի ստեղծագործությունները: Նա մեծ հունամիզմ էր՝ համակված միշտ գեղեցիկությամբ ու բարության ուժի հավատով: Նա սիրում էր մարդկանց և ասում այն ամենը, ինչ ճշուն ու ստորագծում էր նրանց:

Չեխովի ապրած ու ստեղծագործած դարաշրջանը հետաքրքիր էր և ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանն է: Ռուսաստանում ցարը, ազնվականությունը, կալվածատերերը և հետզհետե ակտիվացող բուրժուազիան ժողովրդի շահագործում, կերեցում էին՝ յուրացնելով նրա աշխատանքի ողջ արդյունքը, զրկելով նրան հացից, իրավունքից, դպրոցից, մշակույթից: Սոցիալ-քաղաքական անարդարությունները Չեխովի պոետական հոգին լցնում են հայրենասիրությամբ: Նա Ռուսաստանի ամենամեծ հայրենասերներից մեկն է: Գոգոլի և Շչեդրինի պես անխնա ծաղրում էր այն ամենը, ինչ արգելապետ էր ժողովրդի ազատության և երջանկության գործը:

Լինելով աշխարհի նշանավոր նովելագիրներից մեկը՝ նա չունեցավ ոչինչ «նշանավոր» ոչ կյանքում, ոչ սովորույթներում: Գրողի մեջ ամեն ինչ առօրեականության չափ պարզ էր ու հստակ: Իսկական մեծը պարզությունն է: Սա ճշմարտություն է, և դա չհասկացողը չի կարող հասնել կյանքի ներքին իմաստի ըմբռնմանը: Մարդկության անցած ուղին, հագաբանականների պայքարում ձեռք բերված գաղափարները մարդուն շատ բաներում են պարտավորեցնում: Չեխովը ցանկանում էր բարոյապես վերականգնել մարդուն: Մարդիկ սխալ են ապրում, եթե անհաղորդ են ազգային ու համաշխարհային մշակույթի գլուխգործոցներին, անհաղորդ են, որովհետև նրանց չի հասել մշակույթի բարերար ազդեցությունը, ավելի լավ ու մարդկային չի դարձրել ու չի թևավորել նրանց: Մարդ չպետք է հոգեպես կողորպված ու աղքատ լինի, անպայման պետք է ինչ-որ բան սովորի անտիկ հնադարի, Վերածննդի արվեստի... Մշակույթը մարդկանց բարոյական առողջության պայմանն է: Ժողովրդական արվեստի, մշակույթի հետ

չանցվող մարդը բարոյապես կործանվում է: Չեխովի ստեղծագործություններում մարդու նկատմամբ հավատն ստուգվում է կյանքի անողորմ ճշմարտությամբ:

Չեխովյան պատմեվածիկ լակոնիկ է, սեղմ, խոր ու արտահայտիչ: Իր հերոսի՝ Աստրովի շուրթերով («Քեռի Վանյա») Չեխովն ասում է. «Մարդու մեջ ամեն ինչ պիտի գեղեցիկ լինի. և՛ դեմքը, և՛ հագուստը, և՛ հոգին, և՛ մտքերը...»: Այս թևավոր խոսքում, որ շատ հաճախ ու շատերի կողմից է օրինակ բերվում, դրսևորված է Չեխովի ներաշխարհը: Նա իր գործերով պայքարում էր հանուն մարդու:

Արվեստագետի գործերի պարզ սյուժեներում միահյուսվել են համաշխարհային բարոյական փոփոխություններ, միահյուսվել են համամարդկային ցավն ու տառապանքը: Ժողովրդի կյանքի էական կողմերը տեսնել, ըմբռնել և արվեստով վերարտադրել. այս է մեծ գրողի կոչումը: Գրողը դառնազին ծիծաղում է չերվյակովների, օչունելովների վրա, որոնք մարդու կերպարից հեռացել՝ դարձել են սողուններ: Մարդիկ մեղավոր չեն այն բանում, ինչ դարձել են, սոցիալական համակարգն է նրանց այդպես դարձրել:

Սիա այդ մարդկային կերպարը կորցրած տարրերին անարդարության սյունին գամելով՝ Չեխովը զոգույան անմոռանալի խոսքերով ասում է.

- Տխրալի է, պարոնայք, այս աշխարհում, և իր կողմից ավելացնում,- այդպես այլևս չպետք է ապրել:

Նա պատկերում է, թե ինչպիսի ցնծություն է պատճառում հասարակ մարդկանց բելիկովների մահը, իսկ «Սախալին կղզին» գրքում Չեխովը պատկերել է այն դժոխական պայմանները, որոնց մեջ գտնվում են Սախալին կղզում ցարիզմի զոհերը՝ բանտարկվածներն ու աքսորականները:

Նա երբեք չի հանգում փոխգիշման (հարմարվողականության, ինքն իր մեջ ամփոփելու և կյանքի ամենօրյա հարցերից հեռանալու) որոշումների: «Մարդուն ոչ թե երեք արշին հող է պետք, այլ ողջ երկրագունդը, որ ազատության մեջ նա կարող է դրսևորել իր ազատ հոգու բոլոր հատկություններն ու առանձնահատկությունները»:

Մարդու և բնության միջև առաջացած խզումը ճակատագրական հետևանքներ է ունենում մարդու համար: Բնությունը, ինչպես մշակույթը, մարդու վրա հսկայական բարոյական ազդեցություն ունի, և երկուն էլ նրան շատ բաներում են պարտավորեցնում:

Չեխովը խորհում է, ուզում է, որ մարդիկ ապրեն առանց կեղծիքի, ազատ ապրեն: Որպես դարի մեծ հունամիստներից մեկը՝ նա պաշտպանում է հասարակ մարդու իրավունքները:

«Հաղաբըր» պատմվածքում անանաբույս Իվան Իվանիչը Բուրկինին ու Ալյոսինին ասում է. «Ես միտք էի անում, թե որքան գոհ, երջանակ մարդիկ կան: Ինչպիսի ճնշող ուժ է դա: Նայեցիք այս կյանքին. ուժեղների վերջին օրը ու անգործություն, թուլերի տգիտություն ու անասնակերպություն, չորս կողմն անասելի աղքատություն, մեղություն, այլասերում, հարբեցողություն, կեղծավորություն, ստախոսություն... Մինչդեռ բոլոր տներում ու փողոցներում լուրջություն է, անողոր, քաղաքում ապրող հիսուն հազարի մեջ չկա մեկը, որ ճշա, բարձրաձայն վրդովվի: Մենք տեսնում ենք նրանց, որոնք շուկա են գնում մթերքի, ցերեկն ուտում են, գիշերը քնում, ասում են իրենց դատարկ խոսքերը, ամուսնանում, ծերանում, բարեհոգաբար գերեզման տանում իրենց մեջմեջներից. սակայն մենք չենք տեսնում ու լսում նրանց, որոնք տառապում են, և այն, որ ահալոր է կյանքում, տեղի է ունենում կուլիսների հետևը: Ակներևբար, երջանիկն իրեն լավ է զգում լույս այն պատճառով, որ դժբախտները լռիկ տանում են իրենց լուծել, և առանց այդ լուրջության երջանկությունն անկարելի է կլիններ: Սա ընդհանուր հիպոթեզ է: Պետք է որ յուրաքանչյուր գոհ, երջանիկ մարդու դռան հետևը կանգնի որևէ մեկը՝ մուրճը ձեռքին ու թակոցով շարունակ հիշեցնի, որ կան դժբախտներ, որ ինչքան էլ նա երջանիկ լինի՝ կյանքը վաղ թե ուշ ցույց կտա նրան իր մագիները, մի փորձանք կպայթի՝ հիվանդու-

թյուն, աղքատություն, կորուստներ, և նրան ոչ ոք չի տեսնի ու չի լսի, ինչպես նա հիմա չի տեսնում ու չի լսում ուրիշներին: Սակայն մուրճը ձեռքին այդ մարդը չկա, երջանիկն ապրում է իր համար, և առօրյա մանր հոգսերը հուզում են նրան թեթևակի, ինչպես քամին՝ երերող կաղամախուն. և ամեն ինչ մնում է բարեհաջող»:

Մուրճը ձեռքին մարդը դարձավ Չեխովը: Մուրճի թակոցն անընդհատ հիշեցնում է մարդկանց իրենց բարձր մարդկային պարտականությունները՝ ապրել արժանավայել, առանց կեղծիքի, ապրել գեղեցիկ, այսինքն՝ սեփական աշխատանքով, ոչ մեկին չճնշելով...:

Շարունակելով Գոգոլի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեդրինի գրական ավանդույթները՝ Չեխովն իր երկերում մեծ տեղ տվեց հասարակ մարդուն՝ կառապանին, արհեստավորին, աշխատավոր մարդուն, փոքրիկ տղային, որոնց երջանկությունն ու դժբախտությունը խորապես հուզում են գրողին:

Արտաշարժ է ինձնապա Կանկա ժուկովի նամակը պապիկին: Փոքրիկ Կանկան լամպի աղոտ լույսի տակ գրած նամակի տողերում դրել է իր ցավն ու տառապանքը: Տղան պատրաստ է «հատուցել» (ապագայում) պապիկի լավությունը, միայն թե ինքը քաղաքից գա գյուղ, վերջ տրվեն իր տառապանքներին.

«Միտեի պապի, խո՛ջան ինձ, տար ինձ այստեղից տուն, գյուղ, էլ ճար չկա մնալու... Քո ոտքերն ընկած աղաչում են ու քեզ համար միշտ կաղոթեն աստծուն, տար ինձ այստեղից, թե չէ կմեռնեմ...»:

Կանկան ծոմեց բերանը, սևացած բռունցքով սրբեց աչքերն ու հեկեկաց:

«Ես քեզ համար բուրձն է կլիշեմ,- շարունակեց նա,- կաղոթեմ աստծուն, իսկ թե մի վատ բան արի, ծեփիր ինձ՝ ինչքան ուզես: Իսկ թե մտածես, որ ես պարսպ թրև կգամ, ես, ի սեր Քրիստոսի, կխնդրեմ գործակատարին, որ մաքրեն նրա կոշիկները կամ թե Ֆեդկայի փուխարեն հոտաղ կդառնան: Սիրելի պապի, էլ հնար չկա մնալու, քիչ է մնում մեռնեմ: Ուզում էի ոտով փախչեմ գամ գյուղը, բայց կոշիկ չունեմ, վախեցում եմ սառնամանիքից: Որ մեծանամ, քո լավության համար կպահեմ քեզ ու ոչ ոքի մոտ անոթով չեմ անի, իսկ թե մեռար, կաղոթեմ հոգուր համար, ինչպես մայրիկի՝ Պելագայի համար»:

Ա.Պ. Չեխովն իր երկերում առաջ է քաշել հասարակական շահերին ծառայող թեմաներ: Նրա հերոսները վշտով ու կրքոտ խոսում են ճնշող իրականության անարդարության, մարդկանց տառապանքների մասին, սակայն չհիստեն պայքարի ուղիներ, չհիստեն կյանքն ինչպես փոխել: Գրողը նկատագրում է մարդկանց ամենօրյա տառապանքները: Մարդը խաբում է փոքրիկ տղային, խոստանում է և խոստումը չի կատարում («Կենցաղային մանրուք»): Եվ այն, ինչ կենցաղային մանրուք էր (կյանքում մանրուքներ չեն լինում, ամեն մեծ գործ սկսվում է մանրուքից), իր մեջ լուրջ ողբերգություն է պարունակում: Տղային խորապես ցնցում է մարդկային ստորությունը, որին բախվում է առաջին անգամ.

- Լսեցեք, ախր դուք ազնիվ խոսք տվիք, խոսեց Ալյոշան՝ ամբողջ մարմնով դողալով:

Բեյբեկը ձեռքը թափ տվեց նրա վրա և շարունակեց քայլել: Նա խորատուգուն էր իր վիրավորանքի մեջ և արդեն առաջվա պես չէր նկատում տղայի ներկայությունը:

Նա՛ այդ մեծ ու լուրջ մարդը, ժամանակ չունեի տղաներով զբաղվելու: Իսկ Ալյոշան նստեց մի անկյունում և սոսկանով պատմում էր Սոնյային, թե ինչպես խաբեցին իրեն: Նա դողում էր, կարկամում, լաց լինում: Այդ առաջին անգամ էր իր կյանքում, որ նա այդպես դեմ առ դեմ հանդիպում էր ստիճ: Առաջ նա չգիտեր, որ այս աշխարհում բացի անուշ տանձերից, թխվածքներից ու թանկարժեք ժամացույցներից, կան էլի ուրիշ բաներ, որոնք մանկական լեզվում անուն չունեն:

Երկու աշխարհ՝ մանկան աշխարհը և մեծերի աշխարհը: Որքան ավելի մեծ է խզումն այս երկու աշխարհների միջև, այնքան ավելի մեծ ողբերգություն են ապրում փոքրերը:

«Վիշտը» պատմվածքում Չեխովը նկատագրում է, թե ինչպես կառապան Իռնա Պո-

տապովի միակ տղան՝ երիտասարդ Կուզման, մահացել է: Անհուն վիշտ է ապրում հայրը, ինչպես կարող է ապրել ամեն մի ազնիվ, մաքուր հոգի: Հայրը մտածում է, որ մահը սխալվել է, իր կյանքը պետք է առաջ վերցնեի: Որդեկությունս հայրը ցանկանում է որևէ մեկի հետ կիսել իր վիշտը, բայց ոչ ոք չի ուզում լսել նրան, և նա իր վիշտը պատմում է ծիուհուն, և ինչ... ձին իր տիրոջ ձեռքը լիզում է, ու թվում է, թե արտասվում է... Կենդանու մեջ ավելի շատ կարեկցություն, զգացումներ գտնվեցին, քան եսասեր մարդկանց մեջ:

Այն միտքը, որ մարդիկ ապրում են ոչ այնպես, ինչպես պետք է, խորապես հուզում էր Չեխովին: Մարդկանց մտքերն ու զգացմունքները պատենավորված են: Գրողի հունորն աստիճանաբար վերածվում է ուժեղ սարկազմի: Երիտասարդ չինովսկի սարսափից մեռնում է, երբ փոշտավով պատահականորեն թուր է ցայտում ճաղատ գեներալի գլխին («Չինովսկի մահը»):

Չեխովն իր երկերում առաջ է քաշել հասարակական շահերին ծառայող թեմաներ: Նա իր ժողովրդի, հայրենիքի բախտով ապրող, կենսականորեն շահագրգռված ակտիվ քաղաքացի էր: Անխաղախորեն կապված լինելով ժողովրդի, նրա տառապանքների ու երազանքների հետ՝ Չեխովը հունամիստ գրողի մեծ տաղանդով ցույց տվեց, որ հին հասարակությունը դատաարտված է կործանման: Կործանվում է բալեներու այգին: Տերերը չեն կարողանում փրկել այն: Այգու կործանումը նրա տերերի դատավճիռն է («Բալեներու այգին»):

Չեխովն իմաստավորում է կյանքը, արթնացնում է մարդու գիտակցությունն իր շրջապատի հանդեպ ու բարգաճում ընդհանուրը, բարձր շահերին ծառայող գաղափար: «Հիվանդասենյակ հ. 6» պատմվածքում գրում է. «Այն մարդիկ, ովքեր պաշտոնական, գործարար վերաբերմունք ունեն դեպի ուրիշի տառապանքը, օրինակ՝ դատավորները, ոստիկանները, բժիշկները, ժամանակի ընթացքում սովորական դառնալու հետևանքով այն աստիճան քարսիրտ են դառնում, որ եթե ցանկանան էլ՝ չեն կարող իրենց հիվանդներին վերաբերվել այլ կերպ, քան ձևականորեն: Այս տեսակետից նրանք ոչնչով չեն զանազանվում իրենց տան հետնաբակում ոչխար և հորթ մորթող ու նրանց արյունը չնկատող գեղջուկից: Իսկ դեպի ամհալու ձևավորում, անհոգի վերաբերմունք ցույց տալու դեպքում անմեղ մարդուն բոլոր իրավունքներից զրկելու և տաժաճակիր աշխատանքի դատապարտելու համար դատավորին պետք է միայն մի բան՝ ժամանակ: Միայն ժամանակ, որպեսզի պահպանի որոշ ձևականություններ, որոնց համար դատավորին ռոճիկ են վճարում, և այնուհետև ամեն ինչ վերջացած է: Հետո արդարություն և պաշտպանություն փնտրիր-- այդ փոքրիկ, այդ կեղտոտ քաղաքում, երկաթուղուց երկու հարյուր մետր հեռավորության վրա: Եվ մի՞թե Սույուրկին ծիծաղելի չէ մտածել արդարության մասին, երբ ամեն մի բռնություն հասարակությունն ընդունում է որպես խելացի և նպատակահարմար անհրաժեշտություն, և որոշմանության ամեն մի ակտ, օրինակ՝ արդարացման դատավճիռ, առաջ է բերում դժգոհություն, քինախնդրության զգացում մեծ պոռթկում»:

Որպես դարի մեծ հունամիստներից մեկը, Չեխովը պաշտպանում է հասարակ մարդու իրավունքները: Նա կենսական անհրաժեշտություն էր համարում ժողովրդի հետ լինելը, ժողովրդին ծառայելը, օգնելը: Երբ 1892թ. Ռուսաստանում զարհուրելի սով տարածվեց, Չեխովը բժշկի և գրողի մեծ մարդասիրությամբ օգնում էր սովյալներին: Նա որպես բժիշկ և հասարակական գործիչ՝ ծավալել էր հսկայական աշխատանք. կազմակերպել էր բուժօգնության կայաններ, ընդունել հիվանդներին, յուրաքանչյուր հիվանդի համար գտել սփուկանքի ջերմ խոսքեր: Նա շրջել էր գյուղերը, կարողացել գեկուցուններ, հիմնել գյուղական դպրոցներ, բացել փոստի բաժանմունք, անցկացրել նոր խճուղի, անձամբ հետևել այդ ամենի շինարարությանը, ղեկավարել մարդահամարի աշխատանքը: Այս ամենը խոսուն փաստեր են Չեխովի անսահման հումամիզմի:



ՀՈՒՅԵՐ

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

ա) ՄՈՇ ԸՆԴՊԻՐՆ ԾԵՏԸ
ճանփեզրի քարաժայռից
բխող, քարքարոտ ծորակն ի վար...

վերապատմվել զանազան պատեհ առիթներով: Այն ժամանակներում ևս հաղորտեցիներն արտագնա աշխատանքի էին մեկնում:

համար: Պոկոդն էլ մանուշակի բույր առներ նրանից: Իմանար գինը, գնահատեր և երկրպագեր ծնունդը նրա:

նուտում հանիրավի հայտնված օտարին թե մերձավորին օգնության ձեռք մեկնելու: Գուցե նա խելքի եկած լինի ու այս անգամ չհարվածի կողին... իրեն փրկողի:

գ) ԱՅՍԲԱՆԸ՝ ՀԱՍՏՈՏ ԿԱՐԳՈՎ

Սուրեն Գրիգորի Սարգսյանը տասնամյակներ առաջ ժողկրթության Մարտունու շրջբաժնի տեսուչ էր: Ֆիզիկայի լավ մասնագետ էր: Օժտված նաև հումորի ամխառն զգացումով:

Երբ տեսչական ստուգումների էին գալիս մեր միջնակարգը, միջոց էր գտնում բարձր դասարանցիների հետ խոսելու: Հինգ-վեց ժամ պարապմունքներից հետո հերթապահ ուսուցիչը մեզ հրավիրում էր ամենաընդարձակ դասասեյակ: Նստարաններին որքան տեղավորվում, մի երկու այնքան էլ կանգնած էին մնում: Տեսուչ Սարգսյանը բանախոսում էր ֆիզիկայի հրաշք աշխարհում կատարվող հայտնագործությունների մասին: Հետաքրքիր էր նրան լսել: Սակայն մի բան խանգարում էր: Վաղուց ճաշի ժամն անցել էր, և ուտելու զգացումը իրեն զգացնել էր տալիս: Գրպաններում բերած չիր-չամիչը, տանձ-խնձորը երկար դասամիջոցին վերջացած էր արդեն: Ինքներս էինք կերել և հյուրասիրել դասարանի աղջիկներին:

Այդ, ուտելու ցանկությունը ահագնանում էր: Եվ մի պահ այնպես էր թվում, թե բանախոսի խոսքը սկիզբ ունի, բայց վերջ չունի: Ոմանք հորանջում էին: Ոմանք աջ ոտքին հանգստություն տալիս, ձախի վրա հենվում: Մինչև... մինչև շուրջ երեք ժամ տևած բանախոսության ավարտից հետո, մեր աշխուժությունը վերականգնելու համար, միանգամայն լուրջ կերպով ասում էր.

- Այսքանը՝ համառոտ կարգով:

Նորայր ԱՎԵՏԻՍՅԱՆ Թողալառու մանկավարժ Գ. Հաղորդի

Նորայր ԱՎԵՏԻՍՅԱՆ Թողալառու մանկավարժ Գ. Հաղորդի

ՉԵԽՈՎԻ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՃԲԵՆԵՐԸ

Ա.Պ. Չեխովն իր ժողովրդի, հայրենիքի բախտով ապրող, կենսականորեն շահագործված ակտիվ քաղաքացի էր. ժխտելով հինը, ողջունում էր այն նորը, որը հաջորդել է դրան: Որպես հայրենասեր, մեծ հումանիստ՝ նա տողորված էր լուսավոր ապագայի տենչով, հարգանքով և մեծարանքով դեպի մարդիկ, և իր առաջավոր գաղափարներով, իր բարձր արվեստով նա թանկ է բոլոր ժողովուրդներին:

«Քեռի Վանյա» պիեսում Աստրովն ասում է. «Ամենադժվար և ամենաերկար հեռավոր ճանապարհն անգամ հանդուրժելի է, եթե հեռվում երևում է նպատակը: Ինչքան էլ հեռու լինի խավար անտառի միջով անցնող ճանապարհը, այնուամենայնիվ այն կարճ է թվում, եթե հեռվում երևում է մի լույս, որին քո ամեն մի քայլն ավելի ու ավելի է մոտեցնում»:

Արվեստագետը կենդանի է ու սիրելի իր հայրենասիրությամբ, ժողովրդին նվիրվածությամբ, ժողովրդի նկատմամբ գրողի բարձրագույն պատասխանատվության զգացումով և իսկական հումանիզմով: «Հեղինակը պետք է հումանիստ լինի մինչև եղունգների ծայրը», ասել է Չեխովը:

Իր մեծ ժառանգությամբ Չեխովը հարստացրեց ռուս գրականությունը՝ հաստատելով կարճ պատմվածքի բարձր ժանրը: Գրողն իմաստավորում է կյանքը, արթնացնում մարդու գիտակցությունն իր շրջապատի հանդեպ և զարգացնում մարդկության ընդհանուր, բարձր շահերին ծառայելու գաղափարը: Նա ցույց է տալիս ռուս լավագույն մարդկանց՝ իրենց շրջապատող կյանքից հասունացող դժգոհությունը, նրանց անհանգստությունը Ռուսաստանի լավագույն ապագայի համար: Իր ստեղծագործություններում նա ոչ միայն ծաղրում էր գոեհիությունը, ստորությունը, հասարակական չարիքն ու այլանդակ մարդկանց, այլև այդ բոլորին հակադրում էր Ռուսաստանի ազնիվ, խելացի բարեկամներին, նրա վաղվա օրվա մասին մտածողներին:

Հավատարիմ ռուս գրականության հումանիստական մեծ գաղափարներին, մեծարելով իր ժողովրդի աշխատավոր մարդկանց, Չեխովը հավասար սիրով և համակրանքով է պատկերել իր հայրենիքում ապրող նաև մյուս ժողովուրդների ներկայացուցիչներին, այդ թվում և՛ հայերին:

Ա.Պ. Չեխովը հավատում էր լուսավորող ապագային: Նա խորապես համոզված էր, որ մանրացած մարդը («մարդուկը») պետք է մեծանա և ապրի վեհ գործի, բարձր նպատակների համար...

Չեխովի երկերն արդիական հնչողություն ունեն: Այն ամենը, ինչ մենք կարդում ենք, տեսնում ենք այսօր, այդ ամենը հուզում է մեզ:

Ա.Պ. Չեխովի երկերը դաստիարակել և այսօր էլ դաստիարակում են սերունդներին: Նրա պատմվածքները, վիպակները և պիեսները, որոնք կյանքի ճշմարտության խորին հավատի շունչ ունեն, հոգեհարազատ են և ոգևորում են մեզ:

Ռուս գրականության մեջ բարձր է հնչում Չեխով գեղագետի ազատության և հումանիզմի յուրօրինակ ու բարձրահունչ խոսքը:

ՕՖԵԿԱ ԱՐԲՈՒՍՅԱՆ ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

Մարզական

ՄԵՆ ՆՎԵՐ ՄԱՐՏՈՒՆԵՑԻՆԵՐԻՆ

Այսուհետ «Առողջ մարմնում» առողջ հոգի» արտահայտությունը Մարտունու մարզիկների համար կդառնա կարգախոս: Նոր՝ 2012թ. սկզբին մարտունեցիներին մեծ նվեր մատուցվեց. բացվեց Մարտունու քաղաքի մարզահամալիրը՝ մարզիկներին հնարավորություն ընձեռելով տարբեր մարզաձևերում իրենց ուժերն ու հնարավորությունները փորձելու: Քաղաքի տաղանդաշատ մարզիկները, ովքեր մինչև մարզադահլիճի կառուցման ծրագրի իրականացումն էլ փայլում էին իրենց ելույթներով հանրապետության ներսում և նրա սահմաններից դուրս, այժմ ավելի բարվոք ու նպաստավոր պայմաններում կկատարելագործվեն:



որտեղ կկոփվի ոգու և մարմնի զորությունը: Մարտունու շրջանի պատանիները միշտ էլ հաղթանակներով են փայլել տարբեր մարզաձևերում: Ունենալով նոր ու հարմարավետ տարիքի մարզիկների թիվը: Երեխաների մեծ մասը տղաներ են, որոնք հայրենիքի վաղվա զինվորներն են լինելու, և

մարզադպրոց՝ կբազմապատկվեն այդ հաղթանակներն ու ոգեշնչումը: Քաջ գիտակցելով սպորտի կարևորությունը, նրա ազդեցությունը մարդու մտավոր և ֆիզիկական զարգացման վրա՝ մարզիկները ջանք ու եռանդ չեն խնայել անգամ ոչ բարենպաստ պայմաններում պարապմունքներն անցկացնելու և սպորտային տարբեր խմբերում հնարավորինս շատ սաներ ընդգրկելու համար: Բացի այդ, աստիճանաբար ավելանում է սպորտում ընդգրկվող ավագ տարիքի մարզիկների թիվը: Երեխաների մեծ մասը տղաներ են, որոնք հայրենիքի վաղվա զինվորներն են լինելու, և

Ռուզաննա ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆ ԱրՊՀ լրագր. 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀՈՒՍԱՐԱՐ
Իմ քաղաքի՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru
Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Պիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3115: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 30.01.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: